«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՎԿ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ – 2016

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն կամ ԳԿՄԿ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագիտական խմբի առջև դրված էր երկու խնդիր՝

1) հավատարմագրման նպատակով իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ԳԱԱ Գիտակարթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 18

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 18

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 20

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 22

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 28

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 32

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 37

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 41

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 45

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 49

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 51

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 55

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 60

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ . 61

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 70

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ գիտակրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ նպաստելով անհատի շարունակական զարգացմանը՝ գիտակրթական ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման միջոցով՝ իրականացնելով կրթությունից գիտություն սահուն անցումը և փոխշաղկապվածությունը»:

Մինչ 2011 թվականը գործող պետական հավատարմագրման չափանիշների և կարգի համաձայն Կենտրոնը հավատարմագրում չի անցել: Հավատարմագրման ներկա գործընթացին ԳԿՄԿ-ն մասնակցել է իր դիմումի համաձայն:

ԳԿՄԿ-ն իրականացնում է 26 մագիստրոսական կրթական ծրագրեր, որոնցից 23-ը առկա ուսուցման և 11-ը՝ հեռակա ուսուցման ձևերում: Ծրագրերը կառուցված են կրեդիտային հենքով և պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Դրանք վերանայվել են 2014թ.՝ ԱՊՀ և մի շարք այլ երկրների առաջատար ԲՈՒՀ-երի ծրագրերը հարմարեցնելով Կենտրոնի տեխնիկական և մարդկային ռեսուրսներին և ունեն հստակ գիտահետազոտական կարողություններով կադրերի պատրաստման ուղղվածություն: Կերտրոնն ունի օտար լեզվով կրթական ծրագրի իրականացման փորձ, սակայն ներկայումս չունի այդպիսի ոչ մի ծրագիր, ինչպես նաև այլ հաստատությունների հետ համատեղ իրականացվող կամ կրկնակի դիպլոմներ շնորհող ծրագրեր: Քիչ են նաև այն ծրագրերը, որոնք անմիջական կապ ունեն արտադրության հետ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ Կենտրոնը իրականացնում է մի շարք միջառարկայական մագիստրոսական ծրագրեր, սակայն խնդիրներ է տեսնում ինչպես կրթական ծրագրերի, այնպես էլ առանձին դասընթացների մակարդակով կրթական վերջնարդյունքների ձևակերպումների հարցում:

Կենտրոնն ապահովված է հետազոտական բարձր կարողություններով օժտված **պրոֆեսորադասախոսական կազմով, որը ձևավորվում է ԳԱԱ ինստիտուտների կադրային ներուժի հիման վրա՝ պայմանագրային հիմունքներով. դասախոսների ընտրության համար մշակված որակական չափանիշները և ընտրության ընթացակարգերը չեն կիրառվում: Իրականացվում է դասախոսական կազմի գնահատում ուսանողական հարցումների, դասալսումների և ատեստացիաների միջոցով, իսկ վերապատրաստումները կազմակերպվում են ըստ Կենտրոնի հնարավորությունների. դասախոսական կազմը մասնակցել է բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովմանն ուղղված վերապատրաստումների, իսկ դասավանդողների ակտիվ ներգրավվածությունը ԳԱԱ ինստիտուտների գերակա գիտահետազոտական ծրագրերում գործնականում ապահովում է**

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

նրանց մասնագիտական առաջընթացը: Դասախոսական կազմի կայունացման և երիտասարդացման քայլեր են արվում ասպիրանտներին դասավանդման պրոցեսում ներգրավելու և օժանդակություն ցուցաբերելու միջոցով:

ԳԱԱ ինստիտուտների և Կենտրոնի առկա լսարանային, լաբորատոր, գրադարանային ռեսուրսները և դասախոսական կազմը ձևավորում են ուսումնառության արդյունավետ միջավայր և նպաստում են ծրագրերի հիմնական վերջնարդյունքների ձևավորմանը: Ֆինանսական մուտքերը ձևավորվում են պետական ֆինանսավորումից, ուսանողների վարձավճարներից, արտաբյուջետային միջոցներից, գիտահետազոտական և դրամաշնորհային ծրագրերից: Կրթական ծրագրերի իրականացման հետազոտական մասի և տեխնիկական սարքավորումների արդիականացման ֆինանսական ապահովումը իրականացվում է ԳԱԱ ինստիտուտների կողմից, իսկ Կենտրոնը տրամադրում է միջոցներ դասապրոցեսի կազմակերպման և դասախոսական կազմի աշխատավարձի վճարման համար: Ներկայումս Կենտրոնի տրամադրության տակ առկա են բավարար ռեսուրսներ կրթական ծրագրերի կայուն իրականացման համար:

Ուսանողների հավաքագրման և ընդունելության գործող մեխանիզմները Կենտրոնին թույլ են տալիս վերջին տարիներին ապահովել ուսանողների կայուն թիվ: Անհանգստացնող է տարիներ շարունակ չպակասող հեռացվողների մեծ թվաքանակը, որը ցույց է տալիս, որ Կենտրոնի կողմից այդ ուղղությամբ իրականացվող քայլերը չեն ծառայում իրենց նպատակներին:

Ուսումնական պրոցեսները Կենտրոնում կազմակերպվում են ակադեմիական միջավայրում՝ փոքր խմբերով և ուսանողներին անմիջականորեն ներգրավելով հետազոտական գործընթացներում, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը և ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը: Փորձագիտական խումբը կարևորում է այն փաստը, որ ուսանողների կարծիքով դասախոսները և մագիստրոսական թեզերի ղեկավարները միշտ հասանելի են նրանց համար:

Գնահատման համակարգի վերաբերյալ ուսանողները իրազեկվում են տրամադրվող կրթական ծրագրերի տեղեկագրքերի միջոցով, իսկ գրագողության դեմ պայքարի և գնահատման բողոքարկման մեխանիզմների առկայությունը նպաստում են ակադեմիական ազնվությանը, գնահատման գործընթացի թափանցիկությունը ու անաչառությունը: Փորձագիտական խումբը խնդիրներ է տեսնում, որ գնահատման համակարգում հստակեցված չեն, թե ինչպես են գնահատվում գործնական և լաբորատոր աշխատանքները, պրակտիկան, մասնակցությունը սեմինարներին, գրականության ակնարկի իրականացումը, անհատական և խմբային աշխատանքները:

Հետազոտության ոլորտում Կենտրոնի հետաքրքրությունները և հավակնությունները հիմնականում սահմանափակվում են կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերով նախատեսված գործունեությամբ, որն իրականացնում են ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներում տեղակայված մասնագիտական ամբիոնների աշխատակիցները՝ ինստիտուտների կողմից իրականացվող թեմատիկայի շրջանակում: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գիտական բաղադրիչը պետք է հանդիսանա հետազոտական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններից մեկը, Կենտրոնը պետք է պաշտոնապես հստակեցնի հետազոտական ոլորտում իր սեփական գերակա նպատակները և խնդիրները: Գործելով ԳԱԱ հետազոտական առաջնակարգ միջավայրում՝ ԳԿՄԿ-ն ուսանողների համար բացառիկ հնարավորություն է ստեղծում հետազոտության և ուսումնառության գործընթացների արդյունավետ զուգակցման համար:

Միջազգային համագործակցությունը կարևորվում է ԳԿՄԿ ղեկավարության կողմից՝ հիմնական նպատակ համարելով հետազոտական աշխատանքների միջազգայնացումը և Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրումը: Կենտրոնը չունենալով արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն, այնուհանդերձ, ծավալում է որոշակի գործունեություն ուղղված միջազգայնացմանն ու արտաքին կապերի ընդլայնմանը:

Սակայն Կենտրոնը արդյունավետ չի օգտագործում ԳԱԱ և գիտական ինստիտուտների միջազգային կապերն իր զարգացման և առաքելության միջազգային բաղադրիչի իրականացման համար: Միջազգային կապերի բաժինը չունի անհրաժեշտ մասնագետներ և չի իրականացնում կանոնակարգված գործընթացներ, իսկ կնքված միջազգային և տեղական համգործակցության պայմանագրերը արդյունավետ չեն գործում: Օտար լեզվի իմացության մակարդակը, գործող ՄԿԾ-ների գրավչությունը և Կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումները դեռևս բավարար չեն ուսանողների և դասավանդողների շարժունությունը և մասնակցությունը միջազգային փոխանակային ծրագրերում ավելացնելու համար:

ԳԿՄԿ կառավարման համակարգը ոչ տրադիցիոն է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության համար: Կառավարումը իրականացվում է հաստատության հիմնադիր հանդիսացող ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, գործադիր մարմնի՝ տնօրենի և Կենտրոնի Գիտական խորհրդի կողմից: Տնօրենը և Գիտական խորհրդի կազմը հաստատվում են ԳԱԱ նախագահության կողմից, որը կարող է ազդել Կենտրոնի գործունեության ինքնուրույնության վրա: *Կառավարման մարմինների ձևավորման գործող ընթացակարգերը հնարավորություն են տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներին: Կառուցվածքը, կանոնակարգերը և պաշտոնների անձնագրերը կարիք ունեն փոխհամաձայնեցման և գործունեության համապատասխան ոլորտների կառավարիչների պատասխանատվությունների և լիազորությունների շրջանակների հստակեցման:*[2]

ՀՀ կրթական դաշտում ԳԿՄԿ-ն իրեն դիրքավորում է որպես հետազոտական համալսարանի նախատիպ, մինչդեռ իր կառուցվածքում չունի ստորաբաժանում կամ գիտության ոլորտի պատասխանատու: *Գործող կառուցվածքը և կառավարման համակարգը կարիք ունեն ռազմավարական խնդիրների լուծմանը համապատասխանեցման, ինչպես նաև վերին և ստորին օղակների միջև ենթակայության շղթայի հստակեցման: Կենտրոնի կողմից ուսումնասիրվում են էական համարվող արտաքին գործոնների ազդեցությունները, հավաքագրվում տեղեկատվություն կրթական ծրագրերի և այլ գործընթացների իրականացման արդյունքների վերաբերյալ: Գործընթացների վարչարարությունն իրականացնելիս որակի ամբողջական կառավարման սկզբունքը ներդրման փուլում է*[3]:

ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի ձևավորման, փաստաթղթերի մշակման, գործընթացների իրականացման համար արտաքին խթան է հանդիսացել ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհը: Կենտրոնում կարևորում են ուսուցման որակի շարունակական բարելավման ռազմավարությունը, որն արտացոլված է վերանայված ռազմավարական ծրագրի նպատակներում և խնդիրներում:

Կենտրոնի ՈԱ համակարգը ներկայումս ձևավորման փուլում է և լիարժեք չի իրականացնում իր գործառույթները: Համակարգը դեռևս չունի անհրաժեշտ մեխանիզմներ և չի հավաքագրում բավարար տվյալներ ծրագրերի և այլ մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման և դրանց որակի մասին հաշվետվողականության ապահովման համար: Կենտրոնի որակի ապահովման ոլորտի հիմնական փաստաթղթերը ամփոփված են Որակի ապահովման ձեռնարկում, որտեղ ներկայացված են նաև որակի ապահովման համակարգի կառուցվածքը և պատասխանատվությունների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների ու ստորաբաժանումների միջև: Սակայն որակի ապահովման ընթացակարգերը, որոնցով պետք է առաջնորդվեն Կենտրոնի աշխատակիցները որակի ապահովման գործընթացներն իականացնելիս, և հիմնական

---

[2] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[3]Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

գործընթացներին շահակիցների մասնակցության մեխանիզմները դեռևս մշակված չեն: *Համակարգին առնչվող առկա փաստաթղթերը շահակիցներին հասանելի են կայքում Որակի ապահովման ձեռնարկի ձևով, սակայն դերակատարները ամբողջապես տեղեկացված չեն իրենց պարտականությունների մասին*[4]:

ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուժեղ կողմերն են.

1) Բարելավված ռազմավարական ծրագիր՝ նպատակների և գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցով,
2) Սերտ կապը ՀՀ ԳԱԱ հետ, որը հնարավորություն է ստեղծում օգտվելու ԳԱԱ համակարգի հետազոտական ինստիտուտների մարդկային և տեխնիկական ռեսուրսներից,
3) Ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորման հստակ ուղղվածություն ունեցող մագիստրոսական, այդ թվում միջառարկայական կրթական ծրագրերը,
4) Ուսանողների և դասավանդողների ներգրավվածությունը գերակա գիտական հետազոտություններում, գիտաժողովների մասնակցության և հետազոտությունների արդյունքների ժողովածուների տեսքով հրապարակման հնարավորությունը,
5) Բարձրակարգ մասնագիտական կարողություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմը,
6) Ուսումնական պրոցեսի և հետազոտության կազմակերպման համար լսարանային, լաբորատոր, տեխնիկական, գրադարանային և այլ անհրաժեշտ պայմանների առկայությունը,
7) Պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև ուսանողների մասնագիտական կատարելագործվելուն խթանող ակադեմիական միջավայրը,
8) Գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ձգտումը՝ ինտերնետային կայքի միջոցով,
9) Որակի ապահովման ձեռնարկի և որակի ապահովման կանոնակարգված գործընթացներ իրականացնելու համար փաստաթղթային հենքի առկայությունը:

ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի թույլ կողմերն են.

1) *Կենտրոնի կառավարման գործող համակարգի ոչ հստակ համապատասխանությունը ռազմավարական խնդիրների իրականացմանը*[5],
2) Էթիկայի ձևակերպված նորմերի բացակայությունը և ներքին շահակիցների պասսիվ մասնակցությունը իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին,
3) *Կառավարման համակարգի արդյունավետության, մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսների, արտաքին գործոնների ազդեցությունների հիմնավոր ուսումնասիրությունների և SWOT վերլուծությունների սակավությունը* [6],
4) Օտար լեզվով դասավանդվող, համատեղ իրականացվող կամ կրկնակի դիպլոմներ շնորհող ծրագրերի բացակայությունը,
5) Ըստ ռազմավարական նպատակների ֆինանսական պլանավորման և հաշվետվողականության սահմանված ընթացակարգերի և ձևաչափերի բացակայությունը,

---

[4] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[5] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[6] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

6) *Կենտրոնի գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների բացակայությունը, կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության մասնատվածությունը*[7],
7) Հետազոտական ոլորտում հստակ արտահայտված հավակնությունների և հետաքրքրությունների բացակայությունը,
8) Միջազգային համագործակցության սահմանված ուղղությունների կամ գերակայությունների և ընդհանուր քաղաքականության բացակայությունը, միջազգային փոխանակման ծրագրերում ուսանողների և դասավանդողների մասնակցության ոչ բավարար մակարդակը, գործող միջազգային և տեղական համագործակցության պայմանագրերի սակավությունը,
9) Հիմնական գործընթացների համար ՊԻԳԲ շրջափուլով մշակված որակի ապահովման ընթացակարգերի բացակայությունը, որակի ապահովման համակարգի դերակատարների տեղեկացվածության ցածր մակարդակը իրենց պարտականությունների մասին, ներքին և արտաքին շահակիցների պասսիվ մասնակցությունը ՈԱ հիմնական գործընթացներին,
10) Որակի ապահովման և Միջազգային կապերի ստորաբաժանումներում արհեստավարժ մարդկային ռեսուրսների սակավությունը:

Փորձագիտական խմբի առաջարկությունները.

Առաքելությունը և նպատակները

1) Մշակել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավմանն ուղղված մեխանիզմներ և ընթացակարգեր,
2) Մշակել ռազմավարական ծրագրի առանձին նպատակների և խնդիրների իրականացման փաստացի առաջընթացի գնահատման առանցքային որակական և քանակական ցուցիչների լրակազմ,
3) Ակտիվացնել շահակիցների (հատկապես՝ շրջանավարտների որպես շահակիցների կարևոր մաս) մասնակցությունը կենտրոնի առաքելության, նպատակների և խնդիրների մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացներին,
4) Կենտրոնի կողմից իրականացվող մասնագիտությունների համար մշակել Որակավորումների սեփական շրջանակ:

Կառավարումն ու վարչարարությունը

5) Վերլուծել և գնահատել Կենտրոնի կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական ծրագրի նպատակներին և կառավարման համակարգի արդյունավետությունը,
6) Հստակեցնել բոլոր ստորաբաժանումների պատասխանատվությունները, ներդնել պաշտոնների անձնագրերի ամբողջական համակարգ,
7) Ղեկավար պաշտոնյաների գործառույթների հստակեցման միջոցով՝ մարդկային ռեսուրսներ տրամադրել Կենտրոնի գիտաուսումնական աշխատանքները, ինչպես նաև կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչները համակարգելու համար,
8) Մշակել կառավարման էթիկայի նորմեր,
9) Ապահովել դասախոսների և ուսանողներին ավելի լայն և գործնական մասնակցությունը իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործառույթներում,
10) Մշակել ռազմավարական ծրագրի և կենտրոնի պլանների գնահատման և վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացնել ՌԾ մշտադիտարկում և գնահատում,

---

[7] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

11) Վերանայել Կենտրոնի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը բոլոր գործընթացներում,
12) Մշակել արտաքին գործոնների ազդեցության և Կենտրոնի գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմ, ըստ այդ ցուցանիշների իրականացնել տարեկան գնահատումներ և վերլուծություններ,
13) Հստակեցնել Կենտրոնում իրականացվող կրթական ծրագրերի և այլ գործընթացների կառավարման և արդյունավետության գնահատման ու վերլուծության համար հավաքագրվող անհրաժեշտ տեղեկատվությունը, մշակել որակի ապահովման անհրաժեշտ մեխանիզմները:

Մասնագիտության կրթական ծրագրերը

14) Մշակել կրթական ծրագրերի և այլ գործընթացների բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգեր՝ լիարժեք օգտագործելու միջազգային առաջատար փորձը Կենտրոնի ծրագրերը համադրելի դարձնելու արտասահմանյան համալսարաններում իրականացվող համանման ծրագրերի հետ,
15) Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերլուծության, ինչպես նաև բենչմարքինգի արդյունքների հիման վրա հստակեցնել ՄԿԾ-ների վերջնարդյունքները և ապահովել դասավանդվող առարկաների վերջնարդյունքների և բովանդակային կապը դրանց հետ,
16) Զարգացնել գործող միջառարկայական մագիստրոսական ծրագրերը և խթանել նորերի ստեղծումը, հիմնադրել արտադրության հետ անմիջական կապ ունեցող և այլ հետազոտական կամ ուսումնական հաստատությունների հետ իրականացվող ծրագրեր,
17) Մշակել կրթական վերջնարդյունքներին համապատասխան ուսանողակենտրոն դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության, դրանց արդյունավետության գնահատման և արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր,
18) Հստակեցնել ՄԿԾ-ի բովանդակային և կառուցվածքային նորացման գործընթացում աշխատաշուկայի, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և վերլուծության մեխանիզմները,
19) Գնահատման համակարգում և դասընթացների մասնագրերում հստակեցնել վերջնարդյունքների և թեզերի գնահատման չափանիշները, ներառելով դասավանդման և ուսումնառության բոլոր ձևերի արդյունքների գնահատումները (գործնական և լաբորատոր աշխատանքներ, պրակտիկա, մասնակցություն սեմինարներին, անհատական և խմբային աշխատանքներ և այլն),
20) Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ իրականացնել կրթական ծրագրերի մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգով նախատեսված բոլոր գործողությունները, մշակել ՄԿԾ-ների իրականացման արդյունավետության գնահատման և որակի ապահովման ցուցիչներ:

Ուսանողները

21) Մշակել ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված քաղաքականություն և ընթացակարգեր,
22) Բարելավել կարիերայի կենտրոնի աշխատանքները, ապահովելով դրանց շարունակականությունը և հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև,
23) Մշակել ուսանողների վարչական աշխատակազմին դիմելու մեխանիզներ և ընթացակարգեր,
24) Ընդլայնել ուսանողների ինքնակառավարման մակարդակը, ապահովելով նրանց առավել լայն ներգրավվածությունը կառավարման մարմիններում իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործառույթներում,

25) Կիրարկել ուսանողների վճարովի հիմունքներից անվճարի տեղափոխման ռոտացիոն կարգը,
26) Մշակել ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

27) Գործարկել «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման» կարգը և իրականացնել Կենտրոնի ՊԴ կազմի համալրումը մրցույթային հիմունքներով,
28) Մշակել ՊԴ կազմի խրախուսման տույժի ենթարկման քաղաքականությունը և ընթացակարգերը, ներառելով հեռացումը աշխատանքից,
29) Բոլոր մասնագիտության կրթական ծրագրերի համար սահմանել դասախոսական կազմի կոմպետենցիաներին ներկայացվող պահանջները՝ շրջանավարտներին շնորհվող որակավորումներին համապատասխան,
30) Լրամշակել ՊԴ կազմի գնահատման մեխանիզմները, ընդգրկելով ինքնագնահատման և գործընկերային գնահատման մեխանիզմները, ինչպես նաև բազմակողմ գնահատման արդյունքների ամփոփման պահանջները և ընթացակարգը,
31) Ներդնել ՊԴ կազմի որակավորման բարձրացման համակարգ և մշակել վերապատրաստումների արդյունավետության գնահատման մեխանիզմներ,
32) Ձեռնարկել միջոցառումներ կանոնակարգելու պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման, կայունության ապահովման և մասնագիտական առաջընթացի գործառույթները,
33) Մշակել վարչական աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատման անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ:

Հետազոտությունը և զարգացումը

34) Մշակել հետազոտական ոլորտում սեփական հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն՝ կարևորելով հետազոտության արդյունքների հնարավոր ապրանքայնացումը և դրա հետ կապելով Կենտրոնի զարգացման հեռանկարները,
35) Կառավարման համակարգի վերակառուցման շրջանակներում դիտարկել գիտահետազոտական գործունեությունը համակարգող պատասխանատու կառավարիչի պաշտոնատեղի ներմուծման հնարավորությունը,
36) Մշակել երիտասարդ գիտաշխատողների խրախուսման քաղաքականություն, զարգացնել գործող մեխանիզմները՝ հիմքում դնելով հետազոտական գործունեության արդյունքների որակի և արդիականության գնահատման ցուցիչներ,
37) Ներդնել ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների կիրառման քաղաքականություն ու ընթացակարգեր,
38) Իրականացնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման կիրառվող մեխանիզմների արդյունավետության ուսումնասիրություններ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

39) Մշակել ֆինանսական միջոցներին համապատասխան Կենտրոնի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն,
40) Մշակել Կենտրոնի ռազմավարական նպատակներին համապատասխան ֆինանսական միջոցների բաշխման մեխանիզմները, ընդգրկելով նրանցում առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ֆինանսավորման գործոնը,
41) Մշակել ԳԿՄԿ գործավարության և փաստաթղթաշրջանառության կարգ,
42) Վերանայել տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման կիրառվող մեխանիզմները, ներառելով դրանցում

դասավանդողների շրջանակներում բավարարվածության և կարիքների վերհանման մեխանիզմներ,

43) Քայլեր ձեռնարկել Կենտրոնի ամբիոնները հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսուցման կազմակերպման համար հարմարեցնելու տեսակետից:

Հասարակական պատասխանատվությունը

44) Հիմք ընդունելով գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշների լրակազմը վերակառուցել հաշվետվությունների ձևաչափը,

45) Մշակել ցուցիչներ հասարակությանը Կենտրոնի հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետության գնահատման համար,

46) Լրամշակել հանրային կապերի հայեցակարգը՝ ամրագրելով հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող գործող մեխանիզմների արդյունավետության գնահատման գործիքները,

47) Մշակել գործիքներ մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման համար:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

48) Մշակել արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն և ընթացակարգեր, հաշվի առնելով ԳԱԱ և ինստիտուտների կապերը և ակտիվացնելով համագործակցությունը նրանց հետ,

49) Բարելավել կենտրոնի միջազգային կապերի բաժնի ռեսուրսները և աշխատանքը, ակտիվացնել բաժնի կապը ամբիոնների հետ՝ միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնելու հնարավոր շահակիցներին,

50) Մշակել մեխանիզմներ կնքված պայմանագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման համար, ավելացնել դասախոսների և ուսանողների մասնակցությունը միջազգային ծրագրերին,

51) Դասախոսական, վարչական անձնակազմի, ինչպես նաև ուսանողների համար կազմակերպել օտար լեզվի պարբերական վերապատրաստումներ,

52) Ներդնել օտար լեզվով դասավանդվող դասընթացներ և ՄԿԾ-ներ, արտերկրյա և տեղական ուսումնական հաստատությունների հետ մշակել համատեղ իրականացվող մագիստրոսական ծրագրեր:

Որակի ներքին ապահովման համակարգը

53) Հստակեցնել ՈԱ համակարգի կառուցվածքը և գործող կառույցները համապատասխանեցնել դրան,

54) Մշակել ընթացակարգեր Կենտրոնի Որակի ապահովման ձեռնարկում նախանշված որակի 7 հիմնական ոլորտների գործընթացների համար,

55) *Մշակել մեխանիզմներ բոլոր դերակատարների կողմից Որակի ապահովման ձեռնարկով նախատեսված գործողություններն իրականացնելու համար*[8],

56) Մշակել ՈԱ գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական և նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերի փաթեթ,

57) Մշակել մեխանիզմներ, որոնք կհստակեցնեն հարցումների արդյունքների կիրառումը կրթական ծրագրերի շարունակական բարելավման նպատակով, և արտաքին փորձագետների գործառույթները կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման գործընթացներում,

58) Մշակել ներքին տեղեկատվության այն լրակազմը և դրա հավաքագրման մեխանիզմները, որոնք Կենտրոնի կառավարման մարմիններին հիմնավոր և վստահելի տեղեկավության կտան մատուցվող ծառայությունների և կրթական

---

[8] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

ծրագրերի արդյունավետության վերաբերյալ, իսկ ներքին և արտաքին գնահատողներին՝ բավարար տեղեկատվություն դրանց որակի վերաբերյալ,

59) Մշակել ՈԱ համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Միջազգային փորձագետը համոզմունք է հայտնում, որ փորձագիտական ընդհանուր զեկույցի այս մասը օգտակար կլինի Գիտակրթական կենտրոնի և նրա շահակիցների համար՝ հաստատության գործունեության միջազգայնացման և շարունակական զարգացման տեսակետից:

Դիտարկումներ

1. Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագիրը անմիջականորեն համահունչ չէ հաստատության առաքելության հետ, և չկան գերակայություններն ու նպատակները գնահատող հստակ մեխանիզմներ:
2. Ընդհանուր առմամբ ԳՄԿ-ն չունի կրթական ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմներ և արդյունավետության գնահատման ընթացակարգեր: Առկա չեն նաև տրամադրվող կրթական ծառայությունների որակի գնահատման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր, որը դժվարեցնում է պլանավորման և տվյալների վերլուծության գործընթացները:
3. ԳՄԿ ծրագրերը կրթական և գիտական են, և ուսանողները հնարավորություն ունեն ներգրավվելու ԳԱԱ-ում իրականացվող հետազոտական աշխատանքներին: Սա եզակի հնարավորություն է, որը ԳՄԿ-ին բարձր հեղինակություն է շնորհում:
4. ԳՄԿ-ն ունի որոշակի քաղաքականություն, սակայն ոչ հստակ ընթացակարգեր՝ ուսանողների կրթական կարիքների գնահատման համար:
5. ԳՄԿ-ն չունի արդյունաբերության (ներքին և արտաքին) ոլորտի հետ սերտ համագործակցության ռազմավարություն, ինչպես նաև պրակտիկայի և համագործակցության համատեղ ծրագրեր (արդյունաբերություն-ակադեմիա, ակադեմիա-ակադեմիա, ակադեմիա-պետական հաստատություններ), որը չի համապատասխանում միջազգային չափանիշներին:
6. ԳՄԿ-ն ունի հետազոտական կարողություններ միջազգայնացման համար, սակայն այս ներուժը և ԵՄ հնարավորությունները պատշաճ կերպով չեն օգտագործվում:
7. Առկա չէ ուսումնական պլանի և համապատասխան կրթական գործընթացների ներդաշնակեցում միջազգային չափանիշներին և որպես արդյունք, կրթական ծրագրերը չեն խթանում միջազգային շարժունությունը:
8. Առկա է թիրախների և միջազգայնացում ապահովող համապատասխան մեխանիզմների ու քայլերի պակաս:
9. Ակադեմիական մակարդակի օտար լեզվի իմացությամբ մարդկային ռեսուրսների պակաս է նկատվում, որի պատճառով ԳՄԿ-ում չկան օտար լեզվով մագիստրոսական ծրագրեր, որոնք կարող են միջազգային հետազոտական կենտրոնների հետ համագործակցության հիմքեր ստեղծել և ավելացնել միջազգային ծրագրերի ու հետազոտությունների թիվը:
10. ԳՄԿ-ի կողմից հստակ մեխանիզմ չի կիրառվում հետազոտությունը կրթական գործընթացի հետ կապակցելու ուղղությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առկա չեն հետազոտության և դասավանդման կատարողականի հստակ սահմանված ցուցիչներ:

Խորհրդատվություններ

1. Ռազմավարական ծրագիրը պետք է ունենա հստակ սահմանված խնդիրներ և յուրաքանչյուր խնդրի չափման մեխանիզմներ:
2. ԳՄԿ-ն պետք է խթանի որակի մշակույթը՝ աշխատելով և՛ որակի ապահովման, և՛ որակի կառավարման ուղղությամբ: Որակի ապահովումը կենտրոնանում է կրթական խնդիրների և ծառայությունների վրա, որոնք օժանդակում են ուսանողներին, մինչդեռ որակի կառավարումը կենտրոնանում է քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետ մշակման և մշտադիտարկման վրա: Որակի քաղաքականությունն ու նպատակները պետք է հրապարակվեն և հասանելի լինեն հանրությանը:
3. Կրթական ծրագրերը պետք է ունենան հստակ ձևակերպված կրթական վերջնարդյունքներ և հմտությունները պետք է ավելի մանրամասն սահմանված լինեն:
4. ԳՄԿ-ն պետք է ստեղծի հետազոտական ծրագրերում ուսանողների մասնակցության մշտադիտարկման համակարգ:
5. ԳՄԿ-ն պետք է շարունակաբար բարելավի իր որակը՝ ստեղծելով ավելի ամուր ցանց մասնավոր և պետական հատվածի հետ, ինչպես նաև ներգրավի նրանց մշտադիտարկման գործընթացներում, որը կնպաստի կարողությունների մակարդակի բարձրացմանը:
6. Համագործակցությունն ու ծրագրերը խթանելու նպատակով ԳՄԿ-ն պետք է ավելի շատ ջանք գործադրի՝ քաջալերելու և մոտիվացնելու դասախոսական կազմին և ուսանողներին, որպեսզի դիմեն և մասնակցեն միջազգային համագործակցության և շարժունության խթանման ծրագրերի:
7. Միջազգային հարաբերությունները խթանելու և արտասահմանցի ուսանողներին և դասախոսներին գրավելու նպատակով՝ ԳՄԿ-ն պետք է մտածի անգլերեն կրթական ծրագրեր տրամադրելու ուղղությամբ, ինչպես նաև պետք է բոլոր կրթական ծրագրերում ավելացնի անգլերենի դասընթացների թիվը:
8. ԳՄԿ ինստիտուտների (կենտրոնների) ռազմավարական փաստաթղթերի առավել լավ համապատասխանեցում, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրությունների շուրջ աշխատանքային համագործակցություն կարող է շահավետ լինել բոլոր կողմերի համար (օր. Միջգիտակարգային/ միջդիսիպլինար կրթական ծրագրեր):
9. ԳՄԿ-ն պետք է ունենա ավելի հստակ գործողությունների պլան ոչ դասավանդող անձնակազմի մասնագիտական զարգացման համար՝ ներառելով նրանց նաև ակադեմիայի նոր հանձնառություններում:
10. Անհրաժեշտ է, որ ԳՄԿ-ն ունենա միջազգային կապերի համակարգող յուրաքանչյուր ինստիտուտում:
11. ԳՄԿ-ն պետք է հրապարակի իր գործունեության, պրոֆեսորադասախոսական կազմի (անգլերեն CV-ների միասնական ձևաչափով), կրթական ծրագրերի, ակնկալվող կրթական վերջնարդյունքների, ընդունելության, շնորհվող որակավորումների, հետազոտական գործունեության, շրջանավարտների զբաղվածության, ինչպես նաև ուսանողներին տրամադրվող կրթական այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը: ԳՄԿ կայքը պետք է լինի հստակ, հավաստի, անաչառ և թարմացված:

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրությունը

14.11. 2016թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից՝

1) **Էդուարդ Հակոբյան** – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) «Էլեկտրատեխնիկա և էլեկտրաբանեցում» ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի ղեկավար,
2) **Նորա Գևորգյան** - քաղաքական գիտ. թեկնածու «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ, դոցենտ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դոցենտ,
3) **Մերի Ղազարյան** – տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Ջերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պաշտպանություն» ամբիոնի վարիչ,
4) **Ազիր Ալիու** – փիլ. դոկտոր (PhD) Համկարգչային գիտությունների որլորտում, Հարավ-Արևելյան Եվրոպական համալսարանի պրոֆեսոր, Մակեդոնիայի վարչապետի խոհրդական գիտության, բարձրագույն կրթության և ինֆորմացիոն-տեխնոլոգիաների գծով,
5) **Թագուհի Աբրահամյան** – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար Անուշավան Մակարյանը:

Թարգմանությունը կատարել է Հայաստանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի որակի կենտրոնի համակարգող Անի Մազմանյանը:

Արձանագրությունները կազմել է ՈԱԱԿ-ի իրավաբան Օֆելյա Պետրոսյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողն ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ԳԿՄԿ-ն դիմել է ինստիտուցիոնալ հավատարմագրման համար 2015թ. սեպտեմբերի 8-ին՝ ՈԱԱԿ-ին ներկայացնելով դիմումը, լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ստուգել է դիմումի փաթեթի համապատասխանությունը ՈԱԱԿ-ի պահանջներին՝ դիմումում լրացված տվյալները, կից փաստաթղթերը և կենտրոնի կողմից լրացված ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշարը:

2015թ. սեպտեմբերի 28-ին, բուհի դիմումն ընդունելու մասին որոշման հիման վրա, ստորագրվել է պայմանագիր ՈԱԱԿ-ի և ԳԿՄԿ-ի միջև: Կազմվել և հաստատվել է պայմանագրի հավելված հանդիսացող հավատարմագրման գործողությունների ժամանակացույցը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի կողմից առանձնացված փորձագիտական խմբի նախնական ընդլայնված կազմը համաձայնեցվել է Հավատարմագրման հանձնաժողովի հետ, որից հետո անդամները ստորագրել են խմբի կազմում աշխատելու և շահերի բախումների բացառման մասին համաձայնագիր: Այնուհետև փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է բուհի հետ՝ պահպանելով

Հավատարմագրման կարգի և փորձագիտական խմբի ձևավորման ՌԱԱԿ պահանջները. նրանց հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ գաղտնիության մասին հավելվածով:

Փորձագիտական խումբը անցել է թվով 5 վերապատրաստումների փուլ՝ հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները,
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

2016թ. մարտի 21-ին ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը հաստատվել է ՌԱԱԿ տնօրենի հրամանով 2016թ. մարտի 16-ին: Գնահատումն իրականացվել է 2016թ. մարտի 24-ից մինչև մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում: Խումբը պարբերական հանդիպումներ է ունեցել՝ քննարկելու բուհի ինքնավերլուծությունը և կից հավելվածների փաթեթը: Արտասահմանցի փորձագետի կողմից վերհանված խնդիրները խմբի ղեկավարի կողմից ներառվել են միասնական նախնական գնահատման հաշվետվության տեքստում: Արդյունքում դուրս են բերվել այցի ժամանակ պարզաբանման ենթակա խնդիրները և որոշվել են հանդիպումների թիրախային խմբերը:

Գործընթացի համակարգողը, խմբավորված ուսումնասիրման ենթակա խնդիրների և հարցերի հիման վրա, փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է փորձագիտական այցի ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկումներ, այցելություններ բուհի կառուցվածքային ստորաբաժանումներ և այլն:

Հիմնական խնդիրների և ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի առանձնացումից հետո, փորձագիտական խումբը հստակեցրել է հանդիպումների ժամանակ քննարկվող խնդիրները: Պարբերաբար կրկնվող հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ հարցադրումները և կազմվել փորձագիտական խմբի նախնական այցի փաթեթը: Փաթեթը պարունակում էր հանդիպումների պլան-ժամանակացույցը ուսումնասիրման և պարզաբանման ենթակա հարցերը՝ ըստ թիրախային խմբերի և այն լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել փորձագիտական այցի ընթացքում: Հաստատության ներկայացրած հաստիքացուցակից ընտրվել են դասախոսական կազմի այն անդամները, ում հետ պետք է տեղի ունենար հանդիպում:

Բուհի ինքնավերլուծությունը

ԳԿՄԿ-ն ինքնավերլուծությունը սկսել է իրականացրել 2013թ. «Որակի ներքին ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և հավելվածների փաթեթը ներկայացվել են ՌԱԱԿ 2015թ. դեկտեմբերի 4-ին: ՌԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ Հավատարմագրման կարգով սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Համակարգողի կարծիքի հիման վրա 2015թ. դեկտեմբերի 25-ին կայացվել է ինքնավերլուծությունը մերժելու մասին ՌԱԱԿ-ի որոշում, և փաստաթուղթը ետ է վերադձվել հաստատությանը:

Վերանայված ինքնավերլուծության զեկույցի անգլերեն և հայերեն տարբերակները, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, ՌԱԱԿ-ի կողմից ընդունվել են 2016թ.

մարտի 4-ին՝ հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո:

Ընդհանուր առմամբ, քննադատական մոտեցմամբ գրված ինքնավերլուծության զեկույցը փորձագիտական խումբը համարեց օգտակար փաստաթուղթ՝ ԳԿՄԿ-ի մասին տեղեկատվություն ձեռք բերելու և կենտրոնի հետ քննարկումներ կազմակերպելու համար: Այնուամենայնիվ, զեկույցի որոշ հատվածներ բացակայում էին կամ բավականաչափ հստակ չէին, և հանդիպումների ընթացքում լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն ունեին: Ինքնավերլուծության հավելվածներում ներկայացված մեծ քանակությամբ կանոնակարգող փաստաթղթեր թվագրված էին 2014 թվականով:

Նախնական այց

2016թ. մայիսի 3-ին համակարգողը փորձագիտական խմբի ղեկավարի հետ այցելել են կենտրոն՝ վերջնականացնելու այցի ժամանակացույցը[9]: Դիտարկվել են խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը և տեխնիկական միջոցները: Համալսարանին ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումներն, ուր ցանկանում են այցելել փորձագետները: Կենտրոնի տնօրենի և կոնտակտային անձի հետ քննարկվել են այցի կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության, ինչպես նաև հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ հարցեր:

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը՝ մայիսի 9-ին փորձագիտական խմբի բոլոր անդամները հավաքվել են ՈԱԱԿ-ում խմբի փակ հանդիպմանը՝ ըստ նախօրոք մշակված օրակարգի /հանդիպման օրակարգը կցվում է/: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբն իր նախնական տպավորություններն է փոխանակել զեկույցի վերաբերյալ, քննարկել հաստատության ուժեղ և թույլ կողմերը, վերջնականացրել դուրս բերված հիմնական հարցերի/խնդիրների ցանկը, որոշել յուրաքանչյուր չափանիշին վերաբերող հարցերի պարզաբանման պատասխանատուին, ինչպես նաև քննարկել հանդիպումները՝ ըստ առանձին թիրախային խմբերի:

Այնուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ 1)**բավարարում/համապատասխանում է** չափանիշի պահանջներին, 2) **չի բավարարում/չի համապատասխանում** չափանիշի պահանջներին:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2015թ. մայիսի 10-13-ն ընկած ժամանակահատվածում: Այցի ծրագրով նախատեսված բոլոր հանդիպումները կայացել են ըստ պլանի /ժամանակացույցը կցվում է/:

Այցը մեկնարկել և ավարտվել է կենտրոնի տնօրենի հետ հանդիպումներով: Հանդիպումներ են տեղի ունեցել ստորաբաժանումների ղեկավարների, ամբիոնի վարիչների, ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի, պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմերի, շրջանավարտների, գործատուների ներկայացուցիչների հետ: Փորձագիտական խումբը հանդիպման մասնակիցներին ընտրել է պատահականության սկզբունքով: Ժամանակացույցով նախատեսված բաց հանդիպմանը ներկայացել են կենտրոնի աշխատակիցներ, որոնք հանդիսանում են նախկին շրջանավարտներ:

Բացի տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներից, այցի ընթացում փորձագիտական խումբը կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն[10] և ռեսուրսների դիտարկում[11]:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների բաց քննարկումները:

---

[9] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

[10] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[11] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Ամփոփիչ փակ հանդիպման ժամանակ չափանիշների բավարարման կամ չբավարարման վերաբերյալ եզրահանգումները և վերջնական եզրակացությունները բաց քննարկման միջոցով համաձայնեցվել են խմբի բոլոր անդամների հետ՝ կիրառելով կոնսենսուսի եղանակը:

Փորձագիտական զեկույց

Այցից հետո փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը պատրաստել են հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափորոշչի փաստերի, դատողությունների և գնահատականի վերաբերյալ, ինչպես նաև արձագանքել են ամբողջական տարբերակին: Փորձագետների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփոփման ժամանակ:

Չնախատեսված ընտանեկան պատճառներով փորձագետ Մերի Ղազարյանը ստիպված եղավ դադարեցնել իր մասնակցությունը փորձագիտական խմբի աշխատանքների վերջին փուլին:

Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք: Երկու փաստաթղթերն էլ թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետի կարծիքի և մոտեցումների զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ է ներառվել զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի տեղացի բոլոր անդամների կողմից հավանության արժանացած ամբողջականացված նախնական զեկույցը թարգմանվել և ուղարկվել է միջազգային փորձագետին: Նրա դիտողությունների հիման վրա նախնական զեկույցը վերախմբագրվել է, և ներկայացնում է գնահատման հիմնական արդյունքները, դատողությունները և խորհրդատվությունը: Նախնական զեկույցը ներկայացվել է ԳԿՄԿ 2016թ. օգոստոսի 29-ին:

Կենտրոնը իր դիտողություններն ու առաջարկությունները զեկույցի նախնական տարբերակի նկատմամբ ՈԱԱԿ է ներկայացրել 2016թ. սեպտեմբերի 16-ին, որից հետո տեղի է ունեցել դիտողությունների քննարկում փորձագիտական խմբի անդամների և Կենտրոնի ներկայացուցիչների միջև: Կենտրոնի ներկայացրած լրացուցիչ փաստաթղթերի և հիմնավորումների քննարկման արդյունքում փորձագիտական խումբը որոշակի փոփոխություններ է իրականացրել զեկույցի վերջնական տարբերակում, որոնք տեքստում բերված են շեղատառերով և դրանց վերաբերյալ նշումներ կան համապատասխան էջերի վերջում:

Զեկույցի վերջնական տարբերակը ներկայացվել է ԳԿՄԿ 2016թ. նոյեմբերի 14-ին:

Համակարգողի ստորագրությունը

14. 11. 2016թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն: ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը հիմնադրվել է 1997թ. ԳԱԱ նախագահության կազմում գործող ասպիրանտուրայի բաժնի հիման վրա: Կենտրոնի հիմնական խնդիրը գիտական կադրերի պատրաստումն է եղել ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության միջոցով: 2004թ. Կենտրոնն ընդլայնել է իր գործունեությունը՝ կազմակերպելով ուսուցում նաև մագիստրոսի կրթական ծրագրերով 25 մասնագիտությունների գծով: Այդ քայլն ուղղված էր բարձրագույն դպրոցի հետ ակադեմիայի մերձեցմանը և մասնագիտական կրթության որակի բարձրացմանը՝ շնորհալի երիտասարդներին գիտահետազոտական աշխատանքների մեջ ներգրավելու և գիտության գրավչությունն ու կրթության հետ ինտեգրումը ապահովելու միջոցով:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնն իր առաքելությունն է համարում՝ «խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ նպաստելով անհատի շարունակական զարգացմանը՝ գիտակրթական ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման միջոցով՝ իրականացնելով կրթությունից գիտություն սահուն անցումը և փոխշաղկապվածությունը»:

Կենտրոնը իր գործունեությունը իրականացնելիս առաջնորդվում է 2014-18թթ. Ռազմավարական ծրագրով և դրա իրականացման Պլան-ժամանակացույցով: Ինքնավերլուծության, ռազմավարական ծրագրի և այլ փաստաթղթերի մեջ սահմանված են բազմաթիվ դրույթներ, որոնք արտացոլում են ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ձգտումներն ու հավակնությունները գործունեության տարբեր ոլորտներում:

Կրթություն: ԳԿՄԿ-ն իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր՝ մագիստրոսի և հետազոտողի որակավորման աստիճանների շնորհմամբ: Ներկայումս Կենտրոնի 21 ամբիոններում իրականացվում են 26 մագիստրոսական կրթական ծրագրեր, որոնցից 23-ը առկա ուսուցմամբ և 11-ը՝ հեռակա ուսուցման ձևերում:

Իր առաքելության մեջ կրթության ոլորտի վերաբերյալ, ի թիվս այլ կարևորումների, Կենտրոնը ընդգծում է՝

- «...գիտակրթական ոլորտի արդի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը,
- կրթության միջազգայնացումն ու մրցունակության ապահովումը,
- գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան մագիստրոսների և ասպիրանտների պատրաստումը»:

Կենտրոնը կարևոր է համարում «մասնագիտության կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային շարունակական արդիականացումը, մասնագիտական կրթական ծրագրերում ուսուցման առաջադիմական մեթոդների և մեխանիզմների ներդրումը, գիտելիքների գնահատման համակարգի շարունակական կատարելագործումը, ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների զարգացումը»: Կրթությունը պետք է իրականացվի «տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրում» բարձրորակ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կողմից: Կենտրոնը պետք է նպաստի «պրոֆեսորադասախոսական համակազմի մասնագիտական ներուժի շարունակական զարգացմանը, հետազոտական, ստեղծագործական նախաձեռնողականության աճին, կադրային ներուժի անհատական և մասնագիտական ինքնահաստատման համար բարենպաստ կորպորատիվ միջավայրի ստեղծմանը»:

Հետազոտություն: Գիտական և նորարարական գործունեությունը Կենտրոնի ռազմավարական առաջնահերթություններից է: Որպես ռազմավարական նպատակ Կենտրոնը դիտարկում է «Գիտահետազոտական աշխատանքների ծավալի աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար նախադրյալների ստեղծումը, Կենտրոնի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացների խթանումը»:

Նախատեսվում է մագիստրոսական ծրագրերի հետազոտական ուղղվածություն, ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական հաստատություններում իրականացվող գիտահետազոտական նախագծերում Կենտրոնի մասնագիտական ամբիոնների ուսանողական համակազմի զգալի ներգրավում, հետազոտական և ուսումնական գործունեության սերտ շաղկապում, պրակտիկաների կիրառական-հետազոտական ուղղվածության խրախուսում. հետազոտական աշխատանքների միջազգայնացման խթանում, Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման միտում:

Հետազոտական գործունեության արդյունքները նախատեսվում է ներդնել ուսումնական գործընթացներում:

Միջազգայնացում: Միջազգայնացմանն առնչվող հավակնությունները հիմնականում սահմանված են Կենտրոնի Ռազմավարական ծրագրի «Գիտակրթական միջազգային կենտրոնի կրթական գործունեությունը» բաժնում: Որպես ռազմավարական նպատակ սահմանված է «գիտակրթական կենտրոնի միջազգային կապերի ընդլայնում, Եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական համագործակցության խթանում»:

Կենտրոնը կարևորում է հետազոտական աշխատանքների միջազգայնացումը, Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրումը, Եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական համագործակցությունը, միջազգային փոխանակման ծրագրերին ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը: Ըստ Ռազմավարական ծրագրի Կենտրոնը քայլեր պատք է ձեռնարկի ամբիոնների կրթական ծրագրերում հրավիրյալ օտարերկրյա դասախոսների մասնակցության ընդլայնման համար նպաստավոր պայմանների ստեղծում, արտասահմանյան առաջատար բուհերի ու գիտակրթական կենտրոնների հետ ակադեմիական միություններում և ցանցերում ներգրավում:

Որակի ապահովում: Կենտրոնը որպես ռազմավարական նպատակ է դիտարկում «որակի ներքին վերահսկման համակարգի ներդրումը, պարբերական ինքնավերլուծության կազմակերպումը, թիրախային գործողությունների պլանավորումը և իրականացումը»: Համակարգի հիմնական խնդիրներն են կրթական ծրագրերի և գործընթացների որակի ապահովման մեխանիզմների շարունակական կատարելագործումը, բոլոր շահակիցների համար Կենտրոնի գործունեության որակի մասին տեղեկատվության թափանցիկության ապահովումը և որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքերի ստեղծումը, որի նպատակով բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ պետք է տրամադրվեն: Կարևորվում է նաև որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունն է դիտարկել որպես բուհի հիմնական հավակնություններ և նպատակներ:

Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի առաքելությունը ներկայացված է 2014-2018թթ. զարգացման վերանայված ռազմավարական ծրագրում. «խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ նպաստելով անհատի շարունակական զարգացմանը՝ գիտակրթական ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման միջոցով՝ իրականացնելով կրթությունից գիտություն սահուն անցումը և փոխշաղկապվածությունը»:

Կենտրոնը հստակեցրել է իր գործունեության ուղղվածությունները դեպի «աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ և մրցունակ գիտակրթական ոլորտի մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը, հետազոտական հնարավորությունների զարգացումը, կրթության միջազգայնացումը, հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում նորարարությունների ներմուծումը»:

Կենտրոնի զարգացման ռազմավարության հիմքում ընկած են նրա առաքելությունը, հիմնարար արժեքները և առաջնահերթությունները, իսկ կոնկրետ գործողությունները նկարագրված են «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանով», որը կազմված է ռազմավարական նպատակների և ընթացիկ գերակայությունների հիմքի վրա:

Առաքելության ձևակերպման մեջ Կենտրոնը հստակեցրել է իր կողմից իրականացվող բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի արդյունքում շնորվող որակավորումների համապատասխանությունը ՈԱՇ-ի մակարդակների (մագիստրոսի և հետազոտողի որակավորման աստիճաններ): Առաքելության այդ բաղադրիչի իրականացումը հաստատությունը հիմնավորում է այն փաստով, որ իրականացվող կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա, որտեղ յուրաքանչյուր մասնագիտության համար առանձին ներառված են ուսումնառության ելքային արդյունքները (գիտելիքներ, հմտություններ և կարողություններ): Համապատասխանության այլ վերլուծություններ կենտրոնում չեն իրականացվել, իսկ Որակավորումների սեփական շրջանակ հաստատությունը դեռևս չունի մշակված՝ չնայած որ հավակնություններ կան հետազոտական համալսարանի նախատիպ դառնալու ուղղությամբ:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Կենտրոնը հստակ ուրվագծում է արտաքին (գործատուներ, ԳԱԱ համակարգն իր գիտահետազոտական ինստիտուտներով և կենտրոններով, կրթության, գիտության և գիտատեխնիկական ոլորտների շահագրգիռ կազմակերպություններ) և ներքին (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական, գիտական ու վարչական համակազմ) շահակիցների շրջանակը, որոնց կարիքները հաշվի են առնվել առաքելության, նպատակների և խնդիրների ձևակերպումներում: Կենտրոնի միջազգային շահակիցները դեռևս հստակեցված չեն. առանձնացված չի միջազգային կազմակերպությունների, հաստատությունների, հիմնադրամների այն շրջանակը, որի հետ կենտրոնը պետք է ունենա կայուն գործող կապեր, ինչը անմիջապես բխում է Կենտրոնի առաքելությունից և ռազմավարական նպատակներից: Թույլ է կապը նաև շրջանավարտների հետ՝ որպես շահակիցների կարևոր զանգված:

Ներքին և արտաքին շահակիցների ներկայացուցիչները Կենտրոնի տնօենի կողմից նշանակովի ընդգրկված են հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների կազմերում, նրանք մասնակցություն են ունեցել Ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ՌԾ) նախագծի լրամշակման և քննարկման գործընթացներում: Կենտրոնում կարևորվում է ուսանողների կարիքների բացահայտումը, ինչը ապահավվում է նրանց ինքնավարության, գործող ուսանողական կազմակերպությունների գործունեության և պարբերաբար անցկացվող հարցումների մեխանիզմների գործառմամբ:

Շահակիցների կարիքները բացահայտող հարցումների արդյունքների հետագա վերլուծության, կիրառման ուղղիները և դրանց ազդեցությունը շահակիցների կարիքների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում դեռևս հստակեցված չեն:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՌԾ-ի իրականացման նպատակով Կենտրոնում կիրառվում են կարճաժամկետ օպերատիվ պլաններ, որոնց միջոցով, ուսումնական տարվա կտրվածքով մշտադիտարկվում են պլանավորված գործողությունների և միջոցառումների կատարողականները:

Կենտրոնում որպես առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման գնահատման մեխանիզմ է դիտարկում ներքևից վեր ուղղված հաշվետվողականության համակարգը, որում ընդգրկված են ամբիոնների, ստորաբաժանումների և տնօրենի տարեկան հաշվետվությունները: Վերջինս տեղ է գտնում նաև ԳԱԱ տարեկան հաշվետվության մեջ:

Կենտրոնում չի իրականացվում առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատում, քանի որ դրանց մեխանիզմները և ընթացակարգերը ներկայումս մշակման փուլում են: Մյուս կողմից, Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանում բացակայում են գործողությունների վերջնարդյունքները, որոնք պետք է ենթարկվեն մշտադիտարկման և գնահատման:

Կենտրոնի ներկայումս գործող ՌԾ-ի կատարման առաջընթացը նույնպես չի վերահսկվում՝ գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմի բացակայության պատճառով, որոնք նույնպես մշակման փուլում են: Հաստատության առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների բարելավման մեխանիզմները և ընթացակարգերը նույնպես դեռևս մշակված չեն:

Դատողություններ: Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման ներկայիս ռազմավարական ծրագիրը, որը հանդիսանում է 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի լրամշակված և համալրված տարբերակը, հստակեցնում է հաստատության առաքելությունը, հիմնարար արժեքները, նրա առաջնահերթությունները, ռազմավարական նպատակները, ընթացիկ գերակայությունները և կոնկրետ գործողությունները: ՌԾ-ի մշակումը և հաստատումը իրականացվել է այն շահակիցների որոշակի մասնակցությամբ, որոնք համագործակցում են կենտրոնի հետ որպես ուսուցումը կազմակերպող ստորաբաժանումների աշխատակիցներ կամ ընդգրկված են կառավարման տարբեր մարմիններում: Կենտրոնը ներկայումս հիմնականում հարցումների միջոցով է իրականացնում ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություն, սակայն ստացված արդյունքների հետագա օգտագործման մեխանիզմները հստակեցված չեն, ինչը նվազեցնում է դրանց իրականացման արդյունավետությունը: Այդ տեսակետից կարելի է համարել, որ հաստատության առաքելությունը և նպատակները համապատասխանում են շահակիցների կարիքներին:

Հետազոտական տիպի համալսարանի նախատիպ դառնալու կենտրոնի հավակնությունների իրատեսականության տեսանկյունից կարիք կա ավելի մանրամասն վերլուծել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանությունը

ՈԱՇ-ի մակարդակների բնութագրիչներին և ունենալ Որակավորումների սեփական շրջանակ:

Ռազմավարական նպատակների իրագործման համապատասխան խնդիրները և գործողությունները, վերջնաժամկետներն ու պատասխանատուները ամրագրված են ՌԾ-ի պլան-ժամանակացույցում, որը հնարավորություն է ընձեռում Կենտրոնին հիմնականում իրականացնել պլանավորված նպատակները և խնդիրները: Ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով կազմվում են կարճաժամկետ օպերատիվ պլաններ, որոնց օգնությամբ մշտադիտարկվում են տվյալ ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների և միջոցառումների կատարողականները: Սակայն կենտրոնի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատում չի կատարվում, քանի որ հստակ ձևակերպված վերջնարդյունքները բացակայում են, իսկ դրանց գնահատման մեխանիզմները, ինչպես նաև բարելավմանն ուղղված ընթացակարգերը դեռևս մշակման փուլում են:

Որպես առաքելության և նպատակների իրականացման գնահատման հիմնական մեխանիզմ դիտարկվող ստորաբաժանումների և դրանց հիման վրա կազմված տնօրենի տարեկան հաշվետվությունները թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել կենտրոնի ձեռքբերումների և բացթողումների վերաբերյալ: Սակայն վերջնարդյունքների գնահատման կատարողականի և, առավել ևս, որակի ցուցիչների բացակայության դեպքում հնարավոր չի լինում գնահատել իրական արդյունավետությունը և ձեռքբերումների ազդեցության չափը, որոշումներ կայացնել հետագա բարելավումների վերաբերյալ: Դրական է, որ հաստատությունն ինքն է ընդունում ԳԱՑ-երի հստակ համակարգի մշակման անհրաժեշտությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կենտրոնն ունի լավ ձևակերպված առաքելություն, հաստատության հիմնարար արժեքները, առաջնահերթությունները և գործունեության սկզբունքները պարունակող Ռազմավարական Ծրագիր՝ իրականացման ժամանակացույցով, որոշակի հստակեցված են ներքին և արտաքին շահակիցները (բացի միջազգային), որոնց հետ քննարկվել են ռազմավարական առաջնահերթությունները, հիմնական գործունեությունը համապատասխանում է առաքելությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնը բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **բավարար է**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Համաձայն գործող կանոնադրության՝ ԳԿՄԿ կառավարումն իրականացվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Կենտրոնի գործադիր մարմինի՝ տնօրենի և Գիտական խորհրդի կողմից:

Կենտրոնը 2013-2014թ. ընթացքում կանոնակարգել է մի շարք կառավարչական և ուսումնավարչական ստորաբաժանումների գործունեությունը: Սակայն, Կենտրոնի կառավարման գործող համակարգի ստորաբաժանումների ենթակայության շղթայի կառուցվածքային սխեմայի ուսումնասիրությունը և այցի ընթացքում կառավարչական և ուսումնավարչական կազմերի հետ հանդիպումները ցույց տվեցին, որ համակարգման ոլորտները և պարտականությունների ու լիազորությունների *շրջանակները հստակ տարբերակված չեն: Մասնավորապես, գործող կարգերում փոխտնօրենի, ուսումնական մասի պետի և դեկանի որոշ գործառույթներ կրկնօրինակում են միմյանց, սակայն հստակեցված են պաշտոնների անձնագրերում*[12]: Կառավարման համակարգում առկա են ստորաբանումներ (օր.՝ գիտական խմբեր, անձնակազմի կառավարման բաժին), որոնց ֆունկցիոնալ նշանակությունները հստակեցված չեն, իսկ գործունեության կանոնակարգերը բացակայում են: Կենտրոնի ղեկավարությունը ընդունում է ԳԿՄԿ կառուցվածքային, ինչպես նաև ստորաբաժանումների և ոլորտների պատասխանատուների գործառույթների հստակեցման անհրաժեշտությունը:

Տնօրենը իրականացնում է Կենտրոնի «ընթացիկ գործունեության ղեկավարումը», իսկ Գիտական խորհուրդը «համակարգում է գիտական և գիտատեխնիկական գործունեությունը»: *Գիտխորհրդի անդամների ուղղակի ընտրություն Կենտրոնում չի նախատեսված. ռոտացիոն կարգով ընտրված խորհրդի կազմը և անդամների թիվը, տնօրենի առաջարկով, հաստատում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը: Ըստ գործող կարգի դեկանին նշանակում է Կենտրոնի տնօրենը*[13]:

Կենտրոնը չունի կառավարման էթիկայի հաստատված նորմեր, որոնց վրա կարելի լիներ հիմնվել գործող կառավարման համակարգում որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց իրականացնելու համար:

Կենտրոնի կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանումները՝ ամբիոնները, միավորում են մասնագիտական ընդհանրություն ունեցող դասախոսական կազմին, որոնք հիմնականում ԳԱԱ աշխատակիցներ են: Ամբիոններում են իրականացվում ուսումնական և գիտահետազոտական գործընթացները՝ օգտագործելով ակադեմիայի ինստիտուտների ռեսուրսները: Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը հինգամյա պաշտոնավարման ժամկետով: Դասախոսական կազմի պաշտոնների զբաղեցման համար «Գիտակրթական միջազգային կենտրոնի պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը» մշակվել է 2014թ.ն դեռևս գործածության մեջ չի դրվել:

Կենտրոնը համարում է, որ կառավարման համակարգն ունի անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ՝ իր գործառույթներն իրականացնելու համար, չնայած որ չի իրականացնում կազմակերպական կառուցվածքի և մարդկային, նյութական և ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածության ուսումնասիրություն, ինչպես նաև գործող կառուցվածքի արդյունավետության գնահատում:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Ելնելով Կենտրոնի կառուցվածքային առանձնահատկություններից և գործող կանոնակարգերից՝ ներքին շահակիցները (դասախոսները և ուսանողները) հնարավորություն ունեն որոշակի մակարդակներում մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներին: Դասախոսների մասնակցությունը կառավարման

---

[12] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[13] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

գործընթացներին փաստացի սահմանափակվում է ամբիոնի նիստերով, ինչպես նաև նրանց ներգրավմամբ որակի ապահովման բաժնի կողմից անցկացվող հարցումներին: Կառավարման մարմիններից միայն Գիտական խորհրդի կազմում են ընդգրկված մեկ դասախոս և երկու ուսանող, իսկ դրանց ձևավորման կարգերը չեն հստակեցնում դասախոսների և ուսանողների մասնակցությունը Կենտրոնի կառավարման գործընթացներին:

Ուսանողները մասնակցություն են ցուցաբերում Ուսանողական խորհուրդի շրջանակներում կազմակերպվող քննարկումներին: Կենտրոնի Գիտական խորհրդում ներկայացված երկու ուսանողներից մեկը ՈՒԽ նախագահն է, որն անդամակցում է խորհրդի աշխատանքներին ի պաշտոնե:

Ուսանողների համար մեկ այլ հնարավորություն է ակադեմիական խմբերի ավագների միջոցով դեկանի հետ հաղորդակցվելը, որը ոչ ֆորմալ կերպով թույլ է տալիս վերհանել ուսանողների կրթական կարիքները: Բացի այդ ուսանողները ներգրավված են ուսուցման որակի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության արդյունավետության գնահատման հարցումներում:

Որոշումներ կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսանողների ներգրավվածության արդյունավետության վերլուծություն Կենտրոնը դեռևս չի իրականացնում:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Կենտրոնը, որպես երկարաժամկետ պլանավորման փաստաթուղթ ընդունում է իր ՌԾ-ը և դրա իրականացման պլան-ժամանակացույցը, որում ամեն մի ռազմավարական նպատակի իրագործման համար նշվում են գործողությունները, իրականացման վերջնաժամկետները և պատասխանատու ստորաբաժանումները: Ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով կազմվել են տարեկան օպերատիվ պլաններ, որի օգնությամբ մշտադիտարկվում է տվյալ ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների կատարողականները: Սակայն ՌԾ-ի իրականացման և մշտադիտարկման մեխանիզմները կանոնակարգված չեն, *և դրա համար օգտագործում են տնօրենի և ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները: Կենտրոնը նախատեսում է մշակել նաև գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմը:*[14]

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Կենտրոնը դեռևս չի հստակեցրել իր աշխատանքների վրա ազդող գործոնների ուսումնասիրության մեխանիզմները և գործիքները: Կենտրոնի Որակի ապահովման ձեռնարկը չի պարունակում տեղեկատվություն այդ մեխանիզմների վերաբերյալ, ինչպես որ չի պարունակում պլանների գնահատման և վերանայման մոտեցումները:

Հստակեցված չի այն տեղեկատվությունը, որի վերլուծության հիման վրա պետք է որոշումներ կայացվեն կենտրոնի նպատակների և խնդիրների, ինչպես նաև գործունեության տարբեր ոլորտներում ռազմավարությունների փոփոխության վերաբերյալ: Մասնակիորեն են կիրառվում SWOT վերլուծություններ, սակավ են արտաքին և ներքին շահակիցների շրջանակներում իրականացվող կարծիքների ուսումնասիրությունները:

[14] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Կենտրոնը, կարևորելով վարչարարության իրականացումը որակի կառավարման սկզբունքով, Որակի ապահովման ձեռնարկում այն դիտարկում է որպես որակի շարունակական բարելավման մեխանիզմ: Սակայն ինքնավերլուծության ուսումնասիրությունից և այցի ընթացքում իրականացված դիտարկումներից պարզ դարձավ, որ Կենտրոնը ներկայումս չունի բավարար նորմատիվային և փաստացի հիմքեր ցուցադրելու որակի կառավարմա սկզբունքը գործողության մեջ:

Երկարաժամկետ պլանավորումը իրականացվում է ՌԾ-ի և իրականացման պլան-ժամանակացույցի միջոցով, *մինչդեռ չի իրականացվում ծրագրի մշտադիտարկման պլանավորում և ռիսկերի գնահատում*[15]: Որպես ձեռքբերումների ընդհանուր գնահատման միջոց կիրառվում են գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ պատրաստված տարեկան հաշվետվությունները: Պլաններում հիմնականում բացակայում են գործընթացների իրականացման վերջնարդյունքները, հստակ պատասխանատուները և ցուցիչները: Շատ քիչ են գնահատումների արդյունքում իրականացված փոփոխությունների դեպքերը, երբ որակի ապահովման կիրառվող մեխանիզմները նպաստել են բարելավումներին:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

2014թ. մշակվել և պաշտոնապես հաստատվել են կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգը և շրջանավարտների կողմից կրթական ծրագրի գնահատման հարցաշարը: Դրանց հիման վրա 2014-2015թթ. իրականացվել են առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների հարցումներ, արդյունքների վերլուծություններ և հաշվետվությունների պատրաստում: Կարգում մատնաշված են նաև ուսանողների ուսումնական առաջադիմության ցուցանիշները:

Բացի կրթական ծրագրերից՝ այլ գործընթացների արդյունավետության գնահատման գործընթացները կենտրոնում համակարգված չեն, բացի այդ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող գործող մեխանիզմների որակի ապահովման գործընթացները սահմանված չեն:

Տեղեկատվության հավաքագրման համակարգը մասնակի կանոնակարգված է կրթական ծրագրերի մասով: Մյուս գործընթացների տեսանկյունից համակարգը ամբողջականացված չէ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Իր կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակման նպատակով Կենտրոնը օգտագործում է տարեկան հաշվետվությունները, ինտերնետային կայքէջը, ֆեյսբուքյան էջերը: Բացի այդ, դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով Կենտրոնը պատրաստում է ուղեցույցներ, իսկ ուսանողներին տեղեկատվություն է տրամադրում կրթական ծրագրերի վերաբերյալ: Սակայն, Կենտրոնի հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները ներկայումս մշակման փուլում են, իսկ մատնանշված աղբյուրների

[15]Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայացվող տեղեկատվությունը պարբերաբար թարմացման կարիք ունի:

Դատողություններ: ԳԿՄԿ կառավարման համակարգը ոչ տրադիցիոն է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության համար: ԳԿՄԿ կառավարումն իրականացվում է հաստատության հիմնադիր հանդիսացող ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Կենտրոնի գործադիր մարմնի՝ տնօրենի և Կենտրոնի Գիտական խորհրդի կողմից: Տնօրենի և Գիտական խորհրդի կազմի հաստատումը ԳԱԱ նախագահության կողմից կարող է ազդել Կենտրոնի գործունեության ինքնուրույնության վրա:

Կենտրոնը, 2014թ-ի վեր, սկսել է իր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգման գործընթացը՝ ի կատարումն վերանայված ՌԾ-ի «Ֆինանսական կայություն, արդյունավետ կառավարում և հակակոռուպցիոն ծրագրեր» բաժնի Նպատակ 4-ի խնդիրների: *Գործող կանոնակարգերի համապատասխան Կենտրոնի գործունեության ոլորտների կառավարիչների (փոխտնօրենի, ուսումնական մասի պետի և դեկանի) պատասխանատվությունների և լիազորությունների շրջանակները որոշ գործառույթներում ծածկում են, չնայած հստակեցված են պաշտոնների անձնագրերով:*[16] Բացի այդ, որոշ ստորաբաժանումների (օր.՝ գիտական խմբեր, անձնակազմի կառավարման բաժին) գործառույթները, և դրանց ֆունկցիոնալ նշանակությունը կառավարման համակարգում հստակեցված կարիք ունեն:

ՀՀ կրթական դաշտում ԳԿՄԿ-ն իրեն դիրքավորում է որպես հետազոտական համալսարանի նախատիպ, մինչդեռ իր կառուցվածքում չունի ոլորտի պատասխանատու, ում գործունեության առաջնահերթություններից կհանդիսանար գիտահետազոտական և ուսումնական միահյուսված միջավայրի նկատմամբ պահանջների ձևավորումը և դրան հետևելը, ինչպես նաև ուսումնական գործընթացում գիտահետազոտական բաղադրիչի շեշտադրումը և հետազոտությունների արդյունքների համակարգումը: *Ներկայումս դա ներառված է դեկանի գործառույթներում*[17]:

Էթիկայի նորմերի խախտման դեպքերը կամ դրանց խախտման միջոցով որոշումների կայացման փաստերը Կենտրոնում եզակի են, չնայած որ կառավարման էթիկայի հաստատված նորմերը բացակայում են, և դրանց վերաբերյալ ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Կենտրոնի ղեկավարությունը գտնում է, որ հաստատության կառավարման համակարգն ապահովված է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներով՝ իր գործառույթներն իրականացնելու համար: Սակայն վստահությունը կարող է հիմնավորված համարվել, եթե իրականացվում է կազմակերպական կառուցվածքի և մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության ուսումնասիրություն, ինչպես նաև գործող կառուցվածքի արդյունավետության գնահատում:

Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրությունը նախատեսված է համապատասխան ընթացակարգով, սակայն մրցույթով ընտրվում են միայն ամբիոնի վարիչները: Դասախոսական կազմի փաստացի ձևավորումը կատարվում է ամբիոնի վարիչի կողմից, ինչը սահմանափակում է այլ, ԳԱԱ համակարգից դուրս, հաստատություններից որակյալ կադրերի ներգրավումը և չի նպաստում կառավարման թափանցիկությանը:

ԳԿՄԿ-ն իր Ռազմավարական ծրագրում գործունեության և որոշումների կայացման գործընթացում կարևորում է կոլեգիալությունը և որոշակի պայմաններ է ստեղծել, որպեսզի

---

[16] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[17] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

դասախոսները և ուսանողները հնարավորություն ունենան մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներին: Սակայն կառավարման մարմինների ձևավորման գործող ընթացակարգերը սահմանափակում են այդ մասնակցության չափը. արդյունքում կառավարման մարմիններում ոչ պաշտոնի բերումով ընդգրկված են ընդամենը մեկ դասախոս և մեկ ուսանող: Ամբիոնների նիստերին ուսանողների գործնական մասնակցությունը նույնպես մեծ չէ: ՈՒԽ նախագահը ի պաշտոնե ընդգրկված է գիտական խորհրդի կազմում:

Կենտրոնի գործունեության երկարաժամկետ և տարեկան պլանավորումները նպատակաուղղված են նրա առաքելության ու նպատակների իրականացմանը, ընդ որում տարեկան հաշվետվությունների միջոցով մշտադիտարկվում է դրանց կատարողականները: Սակայն գործընթացների իրականացման գնահատման օբյեկտիվությունը կաճի չափելի վերջնարդյունքների, կոնկրետ պատասխանատուների և գնահատման հստակ ցուցանիշների առկայության պայմաններում:

Թերի իրականացվող SWOT վերլուծությունները, երբ կոնկրետացված չեն անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման բոլոր աղբյուրները, տվյալների մշակման, վերլուծության և կիրառման մեխանիզմները, չեն կարող թույլ տալ գնահատել միջավայրի ամբողջական ազդեցությունը: Ներդրված ավտոմատացված կառավարման տեղեկատվական համակարգը որոշակի հավաստի տվյալներ է տալիս ուսումնական պրոցեսի և ուսանողների մասով: Սակայն նախորդ ՌԾ-ի կատարողականի գնահատման արդյունքների վերլուծության, ինչպես նաև պլանների գնահատման և վերանայման պաշտոնապես ընդունված քաղաքականության և կոնկրետ փաստերի բացակայությունը թույլ է տալիս **ենթադրել, որ ռազմավարական որոշումների կայացման գործում Կենտրոնի ուշադրությունից կարող են դուրս մնալ որոշակի ռիսկային գործոններ:**

Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգի մշակումը և իրականացման գործիքամիջոցների կիրարկումը լավ փորձ է որակի կառավարման սկզբունքով գործընթացի վարչարարության համար, թեև ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրների լրակազմը չի ընդգրկում բոլոր անհրաժեշտ ուղղությունները, մասնավորապես, օժանդակ ծառայությունները և ուսումնառության ռեսուրսները: Սակայն պլանավորված որակի ապահովման գործընթացների, իրականացված գնահատումների և վերլուծությունների, դրանց հիման վրա *իրականացված բարելավումների առկա փաստերը վկայում են, որ Որակի կառավարման սկզբունքը վարչարարության ոլորտում ներդրման փուլում է*[18]:

Կարևորելով կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը՝ անհրաժեշտ է համակարգել նաև կենտրոնում իրականացվող մյուս գործընթացների արդյունավետության գնահատումը, ուսումնասիրել դրանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը, որը թույլ կտա բարելավել կիրառվող մեխանիզմները և գործիքները, հավաքագրել վստահելի տեղեկատվություն, ունենալ օբյեկտիվ գնահատումներ և կայացնել հիմնավորված որոշումներ:

Նույնը վերաբերում է նաև կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման մեխանիզմներին: Այստեղ էլ տեղեկատվության հավաքագրման համակարգը մասնակի կանոնակարգված է հիմնականում կրթական ծրագրերի մասով: Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմների բացակայությունը կարող է խոչընդոտել ճիշտ մշակելու կրթական ծրագրերի և Կենտրոնի այլ գործունեության վերաբերյալ տեղեկատվության առաջարկվող լրակազմը՝ ներքին և արտաքին շահակիցներին ստույգ, հուսալի և անաչառ տեղեկատվություն տրամադրելու առումով:

---

[18] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կառավարման ներկայիս համակարգը *հիմնականում համապատասխանեցված է Կենտրոնի ռազմավարական խնդիրների իրականացմանը, կառուցվածքը և պաշտոնի անձնագրերը հստակեցնում են գործունեության համապատասխան ոլորտների կառավարիչների պատասխանատվությունների և լիազորությունների շրջանակները, գործող կարգերը հնարավորություն են տալիս ներքին շահակիցներին մասնակցել իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին, որոշակի առումով ուսումնասիրվում են էական նշանակություն ունեցող արտաքին գործոնների ազդեցությունները, գործընթացների վարչարարությունն իրականացնելիս մասամբ ներդրվել են որակի կառավարման սկզբունքը, ինչպես նաև կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշի պահանջներին*[19]:

Եզրակացություն: *ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին* ***բավարար է***[20]:

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը կրթություն է իրականացնում բարձրագույն կրթության երկու մակարդակներում՝ մագիստրոսի և հետազոտողի: Կրեդիտային համակարգի ներդրումը Կենտրոնում ավարտվել է 2010 թվականին, որի արդյունքում կրթական ծրագրերն էականորեն փոփոխվել են և համաձայնեցվել համակարգի պահանջներին: Կենտրոնի 21 ամբիոններում ներկայումս իրականացվում են 26 մագիստրոսական կրթական ծրագրեր՝ 23 առկա, իսկ 11-ը՝ հեռակա ուսուցման ձևերով, և 62 հետազոտողի կրթական ծրագրեր: Այդ ծրագրերը մշակվել և հաստատվել են «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կրթական ծրագրերի հաստատման (արտոնման) կարգ»-ին համապատասխան: Կրթական ծրագրերի մշակման և վերանայումների ժամանակ ամբիոնների մասնագիտական խմբերը ուսումնասիրվել են հիմնականում ԱՊՀ և մի շարք այլ երկրների առաջատար ԲՈՒՀ-երի կրթական ծրագրերը: Սակայն պետք է նշել, որ գործող ծրագրերը ավելի շատ համապատասխանեցված են հետազոտական ինստիտուտների տեխնիկական և մարդկային ռեսուրսներին՝ հետևելով մասնագիտության պետական կրթական չափորոշիչներին: Կրթական վերջնարդյունքները միշտ չէ, որ հստակ և չափելի են ձևակերպված, ուստի վերանայման կարիք ունեն: Հարկ է նշել, որ ուսումնասիրված ՄԿԾ-ներից մասնավորապես «Միջազգային հարաբերություններ» կրթական ծրագրի

[19] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[20] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

դասընթացները բովանդակային առումով կրկնվում են և համադրելի չեն արտասահմանյան համալսարաններում իրականացվող համանման ծրագրերին, իսկ առարկաների ընտրությունը ավելի շուտ սպասարկում է դասախոսների կարիքները, քան ուսանողների:

Կենտրոնում իրականացվող բոլոր կրթական ծրագրերը հասանելի են կայքում կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի ձևով: Տեղեկագիրքը ներառում է կրթական ծրագրի մասնագիրը, կառուցվածքը և բովանդակությունը, ուսումնական պլանի քարտեզը, որը ծրագրի կրթական վերջնարդյունքները կապում է համապատասխան դասընթացների կամ ուսումնական մոդուլների հետ: Դասընթացներն ունեն առարկայական նկարագրեր, որոնք ներառում են առարկայի նպատակը, կրթական վերջնարդյունքները (գիտելիք, կարողություն, հմտություն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ծրագրերի իրականացումը Կենտրոնում կազմակերպվում է՝ հետևելով ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի (առկա և հեռակա ուսուցմամբ) կազմակերպման կարգերին: Օտար լեզվով կրթական ծրագրի իրականացման փորձ Կերտրոնն ունի, սակայն ներկայումս չունի այդպիսի ոչ մի ծրագիր: Քիչ են նաև այն ծրագրերը, որոնք անմիջական կապ ունեն արտադրության հետ, սակայն կան միջառարկայական ծրագրեր:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դասախոսների կողմից պլանավորված դասավանդման և ուսումնառության մեթոդները ներկայացված են դասընթացների ծրագրերի մասնագրերում: Սակայն ուսանողների, դասախոսների և հետազոտողների հետ տեղի ունեցած հանդիպումների ժամանակ հստակ չձևակերպվեց, թե Կենտրոնում ինչպիսի մոտեցում գոյություն ունի կամ իրենք ինչով են առաջնորդվում դասավանդման և ուսումնառության մեթոդները ընտրելիս: Որպես առանձին փաստաթուղթ Կենտրոնը չունի մեթոդների ընտրության, ինչպես նաև դրանց արդիականացման հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր: Կենտրոնի ղեկավարները և դասախոսական կազմը համարում է, որ կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները, որոնք հիմնված են «հետազոտություն կատարելու միջոցով սովորելու» սկզբունքի վրա, հիմնականում արդարացնում են իրենց և նպաստում են վերջնարդյունքների ձևավորմանը:

Կենտրոնում դասախոսների կողմից կիրառվող դասավանդման և ուսուցման մեթոդների արդյունավետությունը գնահատվում է՝ քննությունների ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների վերլուծության և յուրաքանչյուր կիսամյակի ավարտին անցկացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների միջոցով:

Դասապրոցեսը կազմակերպվում է փոքր խմբերով ինստիտուտների ակադեմիական միջավայրում և անմիջապես համակցված է հետազոտական գործընթացների հետ: Փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ ուսանողները նշեցին, որ դասախոսները և մագիստրոսական թեզերի ղեկավարները, որոնք նրանց կցվում են հենց առաջին կուրսից, գրեթե միշտ հասանելի են:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Կրեդիտային համակարգի ներդրման հետ 2010թ.-ին ԳԿՄԿ-ում վերանայվել է ուսանողների գնահատման կարգը, քննությունների և ստուգարքների անցկացման ձևերը և ներդրվել է գնահատման 20 միավորանոց սանդղակ: Գնահատման կարգը վերջին անգամ վերանայվել է 2014 թ.: Նոր կարգում որպես գնահատման հիմնական ձևեր սահմանված են

գրավոր կամ բանավոր քննությունները կամ ստուգումները: Ներկայացված են ընթացիկ և եզրափակիչ քննությունների անցկացման և դրանց վերահանձնման ժամանակացույցերը և ընթացակարգերը, ինչպես նաև ավարտական ատեստավորման կարգն ու գնահատման չափանիշները: Գնահատման կարգում բացակայում է, իսկ փորձագիտական այցի ժամանակ դասախոսների կողմից հստակ չներկայացվեց, թե ինչպես են գնահատվում ուսանողների այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գործնական և լաբորատոր աշխատանքները, 2 շաբաթվա պարտադիր պրակտիկան, մասնակցությունը սեմինարներին, գրականության ակնարկը, անհատական և խմբային աշխատանքները:

Գնահատման չափանիշները և ձևերը հասանելի են ուսանողներին կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքում: Ուսանողները կարող են բողոքարկել իրենց գնահատականը (բանավոր պատասխանի դեպքում անմիջապես գնահատականին տեղեկանալուն պես):

Կենտրոնում գործում են գնահատման հրապարակայնությունը և օբյեկտիվությունը խթանող և գրագողության դեմ պայքարի որոշ մեխանիզմներ. գրավոր քննությունների համար կան հատուկ տետրեր, լուծարքները անց են կացվում ամբիոնի վարիչի մասնակցությամբ, մագիստրոսական թեզերը անցնում են «anti-plagiarism» համակարգով, իսկ պաշտպանությունները ձայնագրվում են:

Ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը Կենտրոնի կողմից դեռևս չի վերլուծվել:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Կրթական ծրագրեր մշակող խմբերի կողմից կատարվել է ԱՊՀ, Եվրոպայի և ԱՄՆ մի շարք համալսարանների առաջավոր փորձի ուսումնասիրություն, սակայն Կենտրոնի ՄԿԾ-ների մեջ կատարված ուսումնասիրությունների արդյունքների կիրառման հիմքերը չեն ներկայացվել փորձագիտական խմբին: Կենտրոնում դասավանդվող ՄԿԾ-ների բովանդակային առումով համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ չի վերլուծվել:

Ինքնավերլուծության մեջ ներկայացված և փորձագիտական այցի ընթացքում տրամադրված տվյալները ցույց են տալիս, որ կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության մակարդակը խիստ ցածր է: Բացի այդ Կենտրոնը չի իրականացնում համատեղ կամ կրկնակի դիպլոմներ շնորհող ծրագրեր այլ ուսումնական հաստատությունների հետ:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Կենտրոնը մշակել և հաստատել է «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը», որին հետևում է որոշ գործընթացների կազմակերպման ժամանակ: 2014թ. Կենտրոնն իրականացրել է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային նորացում «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում: Կազմակերպվել են քննարկումներ, ներկայացվել է կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները և կրթության որակի ապահովման անհրաժեշտությունը: Գործածության մեջ են դրվել առարկայական նոր նկարագրեր, որոնք մշակվել են աշխատաշուկայի արդի պահանջներին և եվրոպական ծրագրային չափանիշներին համահունչ:

Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականություն որպես այդպիսին Կենտրոնը չունի, սակայն դասախոսների կողմից կատարված առաջարկությունների հիման վրա որոշ առարկաներ

դուրս են հանվել ուսումնական պլաններից ու ներառվել են նոր դասընթացներ: Փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ հաստատվեց այն փաստը, որ Կենտրոնը որպես հիմնական գործատուներ և արտաքին շահակիցներ է ընդունում ԳԱԱ հետազոտական ինստիտուտները, և գտնում է, որ ինստիտուտներում տեղակայված ամբիոնները և նրանց աշխատակիցները ծրագրերի վերաբերյալ աշխատաշուկայի և իրենց կարիքները արտահայտում են անմիջապես դրանց մշակումների ժամանակ: Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մյուս մեթոդն է որակի ապահովման բաժնի կողմից իրականացվող ուսանողական և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումները:

ՄԿԾ-ների մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները, ինչպես նաև ծրագրերի արդյունավետությունը Կենտրոնի կողմից դեռևս չեն վերլուծվում:

Դատողություններ: ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը կրթություն է իրականացնում Որակավորումների ազգային շրջանակի բարձրագույն կրթության 7-րդ և 8-րդ՝ մագիստրոսի և հետազոտողի մակարդակներին համապատասխան: Իրականացվող 26 մագիստրոսական ծրագրերը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, սակայն մասամբ են համապատասխանում Կենտրոնի առաքելությանը՝ «խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական տարածքին ինտեգրումը...», քանի որ հազվադեպ են այն ծրագրերը, որոնք անմիջական կապ ունեն արտադրության հետ, իսկ օտար լեզվով իրականացվող ոչ մի ծրագիր ներկա պահին չի գործում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ Կենտրոնը իրականացնում է մի շարք միջառարկայական մագիստրոսական ծրագրեր և խրախուսում է այդ մոտեցումը, սակայն խնդիրներ է տեսնում ինչպես կրթական ծրագրերի, այնպես էլ առանձին դասընթացների մակարդակով կրթական վերջնարդյունքների ձևակերպումների հարցում: Ոչ հստակ և չափելի ձևակերպված դասընթացի վերջնարդյունքները թույլ չեն տալիս ճիշտ ընտրել համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները, ինչպես նաև գնահատել ուսանողի առաջընթացը, իսկ կրթական ծրագրի դեպքում վտանգվում է որակավորման շնորհման գործընթացի օբյեկտիվությունը:

Կենտրոնը կարևորում է ուսանողների ուսումնառության գիտահետազոտական բաղադրիչը և վերջնարդյունքներին համահունչ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և կիրարկումը: Այդ նպատակով, բացի դասավանդման դասական եղանակներից, կիրառվում են մոտեցումներ, որոնք թույլ են տալիս ուսանողներին անմիջականորեն ընդգրկվել իրականացվող գիտական հետազոտություններում: Ակադեմիական միջավայրում դասապրոցեսի կազմակերպումը փոքր խմբերով և հետազոտական գործունեությամբ զբաղվելով ուսումնառության կազմակերպումը նպաստում են ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանը և հիմնական վերջնարդյունքների ձևավորմանը, սակայն ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման և որակի ապահովման տեսակետից Կենտրոնը կարիք ունի մշակել մեթոդների ընտրության, ինչպես նաև դրանց արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր: Փորձագիտական խումբը կարևորում է այն փաստը, որ ուսանողների կարծիքով դասախոսները և մագիստրոսական թեզերի ղեկավարները միշտ հասանելի են նրանց համար:

Գնահատման չափանիշների և ձևերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ուսանողներին տրամադրվող կրթական ծրագրերի տեղեկագրքերում, ինչը ապահովում է գնահատման համակարգի վերաբերյալ ուսանողների իրազեկվածությանը: Միևնույն ժամանակ գրագողության դեմ պայքարի և գնահատման բողոքարկման մեխանիզմների առկայությունը նպաստում են ակադեմիական ազնվությանը, գնահատման գործընթացի թափանցիկությունը ու անաչառությունը: Սակայն գնահատման վերանայված կարգը չի

հստակեցնում միջանկյալ և եզրափակիչ քննությունների հարցաշարերի կազմման մեթոդաբանությունը, գնահատման նվազագույն շեմերը, լսարանային և արտալսարանային ժամերի գնահատումը, ինչը չի նպաստում դասընթացի վերջնարդյունքների ամբողջական և օբյեկտիվ գնահատմանը: Փորձագիտական խումբը խնդիրներ է տեսնում, որ գնահատման համակարգում հստակեցված չեն, թե ինչպես են գնահատվում գործնական և լաբորատոր աշխատանքները, պրակտիկան, մասնակցությունը սեմինարներին, գրականության ակնարկի իրականացումը, անհատական և խմբային աշխատանքները:

Կենտրոնի ղեկավարությունը, ելնելով հաստատության առաքելությունից և միջազգայնացման տեսլականից, կարևորում է ՄԿԾ-ների համապատասխանեցումը արտասահմանյան այլ նմանատիպ մասնագիտությունների կրթական ծրագրերին: Կենտրոնի կողմից կատարված առաջավոր փորձի ուսումնասիրությունները դրականորեն են ազդել կառուցվածքային և մի շարք ծրագրերի բովանդակային փոփոխությունների առումով: Մինչդեռ ՄԿԾ-ների՝ արտասահմանյան այլ նմանատիպ մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ համադրելիության ապահովումը, համատեղ, ինչպես նաև կրկնակի դիպլոմների շնորհման ծրագրերի մշակումը և իրականացումը, կարող են նպաստել միջազգային կրթական տարածքին ինտեգրվելու, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության գործընթացներին:

Կենտրոնը կրթական ծրագրերի որակի ապահովման շրջանակներում սկսել է իրականացնել դրանց մշտադիտարկման գործողություններ, սակայն մշակված կարգը դեռևս ամբողջապես գործարկման մեջ չի դրվել. ՊԻԳԲ-ի շրջափուլի ոչ բոլոր փուլերն են իրականացվում: Մշտադիտարկման արդյունավետությունը կարող է էապես աճել, եթե մշակվի կրթական ծրագրերի իրականացման գնահատման առանցքային ցուցիչների լրակազմ և շահակիցների կարիքները հաշվի առվեն ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ժամանակ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ իրականացվող մագիստրոսական ծրագրերը մշակված են կրեդիտային հենքով, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին և մասամբ Կենտրոնի առաքելությանը, ունեն հստակ գիտահետազոտական կարողություններով կադրերի պատրաստման ուղղվածություն, ուսումնական գործընթացները կազմակերպվում են ակադեմիական միջավայրում՝ փոքր խմբերով և ուսանողներին անմիջականորեն ներգրավելով հետազոտական ծրագրերում, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը և ուսումնառության վերջնարդյունքների ձեռք բերմանը, ունի գնահատման համակարգի թափանցիկությունը և օբյեկտիվությունը ապահովող որոշակի մեխանիզմներ և գրագողության դեմ պայքարի փորձ, փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **բավարար է**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական համակազմը ձևավորվում է ՀՀ այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրական ծրագրերի շրջանավարտների հիման վրա: ՈՒսանողների հավաքագրման հիմնական մեխանիզմը կրթական ծրագրերի ընդունելության հայտարարությունների տեղադրումն է հաստատության կայքէջում և հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով: Բացի այդ կազմակերպվում են «Բաց դռների օրեր», մասնակցում են կրթության էքսպո-ցուցահանդեսներին և տարածում են Կենտրոնի գովազդային գրքույկներ:

Ընդունելությունն ու մրցույթը իրականացվում են ՀՀ ԿԳ նախարարության հաստատած «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ»-ի և «ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության» կանոնների և ընթացակարգի, ինչպես նաև Կենտրոնի գիտխորհրդի կողմից հաստատված մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կազմակերպման կանոնակարգի համաձայն: Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտությունների և ուսուցման ձևերի՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված քննությունների ցանկին և տեղերին համապատասխան:

Մեծ թիվ չեն կազմում (առավելագույնը 6 ուսանող մեկ տարվա ընթացքում) այլ ուսումնական հաստատություններից ուսումը շարունակելու համար Կենտրոն տեղափոխված ուսանողները, սակայն ավելի քիչ են (1 ուսանող մեկ տարվա ընթացքում) Կենտրոնից այլ հաստատություններ տեղափոխված ուսանողները: Շատ ավելի զգալի թիվ են կազմում հեռացումները՝ տարեկան 73-ից մինչև 112 ուսանող, որը զգալիորեն գերակշռում է վերականգնումներին՝ տարեկան առավելագույնը 24 ուսանող:

Կենտրոնի ուսումնասիրությունների համաձայն ուսանողների հեռացման հիմնական պատճառ են հանդիսանում սոցիալական գործոնները և ուսման ցածր առաջադիմությունը: ԳԿՄԿ-ն ջանքներ է գործադրում շտկելու իրավիճակը՝ տարբեր բարեգործական հիմնադրամներից սոցիալապես անապահով շերտերին աջակցելու համար դրամական միջոցներ հայթաթելու և ուսման վարձավճարների զեղչերի ճկուն համակարգ ձևավորելու միջոցով: Կենտրոնում չի կիրառվում ուսանողների վճարովի համակարգից անվճարի տեղափոխման ռոտացիոն կարգը:

Կիրառվող հաշվետվողականության մեխանիզմը յուրաքանչյուր տարվա ընդունելության կազմակերպման արդյունքների քննարկումն է Կենտրոնի գիտխորհրդում:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Կենտրոնի կողմից մշակված և գիտական խորհրդի կողմից հաստատված «ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման» կանոնակարգը հիմք է հանդիսանում ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացի կազմակերպման և իրականացման համար:

ՈՒսանողների կրթական կարիքների վերհանմանն և ուսումնասիրությանն են նպաստում նաև ուսանողների փաստացի մասնակցությունը Կենտրոնի գիտական խորհրդի, ինչպես նաև հարկ եղած դեպքում ամբիոնների նիստերին: Սակայն, հարկ է նշել, որ ուսանողների ներգրավվածության մասնաբաժինը ցածր է կառավարման մարմիններում՝ որտեղ ներկայացվում ու քննարկվում են իրականացվող հարցումներին և կենտրոնի գործունեության տարբեր ոլորտներին առնչվող հաշվետվությունները:

ՈՒսանողների կարիքների վերհանմանն է ծառայում նաև ուսանողական խորհուրդը, որի նախագահը նույնպես Գիտական խորհրդի անդամ է: Փորձագիտական այցի ժամանակ ուսանողները նշեցին նաև ավագների դերը, որոնք կուրսին վերաբերող խնդիրները կարող են բարձրացնել ամբիոնների նիստերի ժամանակ, որոնց նրանք հրավիրվում են: Ուսանողները հիշատակեցին առանձին դեպքեր, երբ նրանց բարձրացրած հարցերը լուծում են ստացել:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ԳԿՄԿ կողմից կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ ուսանողների համար: Այցի ժամանակ ուսանողները նշեցին մասնագիտական օտար լեզվի, ռուսաց լեզվի և հոգեբանության դասընթացները, որից նրանք ստացել են վկայականներ: Ուսանողները տեղեկացրեցին, որ նրանք մշտական խորհրդատվություն են ստանում գիտական ղեկավարներից, որոնք կցվում են նրանց առաջին կուրսում, ինչպես նաև դասախոսներից, որոնք հիմնականում հասանելի են: ԳԿՄԿ ամբիոններում առկա է ուսումնական խորհրդատուի հաստիք, որի հիմնական գործառույթն է աշխատանքներ տանել ուսանողների առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես նաև վերջիններիս տրամադրել տեղեկատվություն ուսումնական պրոցեսի կազմակերպման վերաբերյալ:

Ի հավելումն, ամբիոնները և շրջանավարտների և կարիերայի կենտրոնը տրամադրում են խորհրդատվություն, պարբերաբար կազմակերպվում են տարբեր սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ, որոնք լրացուցիչ հնարավորություններ են ընձեռնում ուսանողների կրթական և այլ կարիքները բավարարելու համար:

Սակայն լրացուցիչ խորհրդատվական պարապմունքները պարբերական բնույթ չեն կրում, կանոնակարգված չեն դրանց նպատակները, չեն իրականացվում հստակ ժամանակացույցով: Մասնագիտական դասընթացներից լրացուցիչ պարապմունքներ Կենտրոնում չեն կազմակերպվում, որոնք կօգնեին բացակայություններ կամ առարկայի յուրացման դժվարություններ ունեցող ուսանողներին:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ԳԿՄԿ-ում ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու համար չկան հստակ սահմանված կանոնակարգեր և ժամանակացույցեր: Սակայն, փաստացի, ուսանողները հնարավորություն ունեն իրենց հուզող տարբեր հարցերով ու խնդիրներով բանավոր և գրավոր դիմել ուսումնական մաս և դեկանին: Մի շարք գործընթացների համար սահմանված են ուսանողների կողմից դիմումներ ներկայացնելու հստակ ընթացակարգեր, սակայն ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ հիմնական դիմումները բանավոր են տրվում:

Կենտրոնում պարբերաբար կազմակերպվում են ուսանողների հանդիպումներ վարչական աշխատակազմի (տնօրեն, փոխտնօրեն, ուսումնական մասի պետ, դեկան և այլն) ներկայացուցիչների հետ:

Ուսանողները վարչական աշխատակազմին իրենց հուզող հարցերով կարող են դիմել ուսանողական խորհրդի միջոցով, որի ներկայացուցիչները համապատասխան հարցադրումներով կարող են հանդես գալ Կենտրոնի Գիտական խորհրդի նիստերում:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Կենտրոնում գործում է Շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժին: Բաժնի կանոնակարգի համաձայն այն մատուցում է ուսանողների կարիերային նպաստող տարբեր ծառայություններ. ապահովում է ուսանողների մասնակցությունը աշխատանքային ցուցահանդեսներին, տարբեր պոտենցիալ գործատուների, զբաղվածության կենտրոնների, այլ ԲՈՒՀ-երի կարիերայի կենտրոնների, տեղական և արտասահմանյան կազմակերպությունների հետ համագործակցություն միջոցով փորձում է նպաստել ուսանողների կարիերայի զարգացմանը:

Կենտրոնի ուսանողները տեղեկացված են բաժնի գործունեության վերաբերյալ, սակայն հարցվածների միայն 50%-ն է բավարարված նրա մատուցած ծառայություններից:

Միևնույն ժամանակ, Շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժինը ունի որակյալ մասնագետների կարիք իր գործառույթները լիարժեք իրականացնելու համար:

4.6 ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներից է «ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում»: Մագիստրոսական կրթական ծրագրերը նախատեսում են ուսանողների ներգրավվածության ապահովում տարբեր գիտահետազոտական աշխատանքներում, և դրանց կատարումը պարտադիր կրթական բաղադրիչ է:

ԳԱԱ-ի հետ սերտ կապի շնորհիվ, Կենտրոնն ունի բավարար մարդկային, նյութատեխնիկական և լաբորատոր հնարավորություններ, ինչպես նաև համապատասխան ակադեմիական միջավայր ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու համար: Դա հնարավորություն է ստեղծում, որ ուսանողները 1-ին կուրսից անմիջականորեն մասնակից դառնան ԳԱԱ համակարգի հետազոտական աշխատանքներին, ներգրավվեն գիտական կազմակերպություններում իրականացվող թեմաներում և միջազգային ծրագրերում: Նրանք մասնակցում են գիտական քննարկումներին և սեմինարներին, ելույթներ են ունենում գիտաժողովներին և իրենց հետազոտությունների հիման վրա հրապարակում են գիտական աշխատանքներ: Կուրսային աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմատիկան, որպես կանոն, ընտրվում է ԳԱԱ ինստիտուտներում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում: Քիչ են ուսանողների կողմից կատարվող կիրառական և արտադրության հետ սերտորեն առնչվող հետազոտությունները:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Կենտրոնում գործում է ուսանողական խորհուրդ, որն իր կանոնադրության հիման վրա ապահովում է ուսանողական ինքնակառավարման գործընթացները: Ուսանողների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ խորհուրդը կարողանում է արտահայտել ուսանողների պահանջները Կենտրոնի կառավարման մարմիններում, նրանք բավարարված են իրավիճակով և իրավունքների պաշտպան այլ մարմնի անհրաժեշտություն չեն տեսնում: ՈՒսանողական խորհուրդը իր տրամադրության տակ չունի առանձնացված սենյակ կամ տարածք, այլ գործում է շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի հետ մի հարկի տակ: Կառույցի գործունեության արդյունավետությունը դեռևս չի գնահատվում:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Որակի ապահովման ձեռնարկում և այլ փաստաթղթերում ներկայացված են Կենտրոնի կրթական և այլ գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և անհրաժեշտ գործընթացները: Սակայն այցի ժամանակ պարզվեց, որ ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման գործող հիմնական մեխանիզմը «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների» և «Գիտակրթական միջազգային կենտրոնում ստացված կրթությունից բավարարվածության վերաբերիալ շրջանավարտների հարցումների» կազմակերպումն է, որտեղ ներառված են հարցեր այդ խնդիրների վերաբերյալ: Ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները և վերհանած խնդիրները քննարկվում են Կենտրոնի Գիտական խորհրդում և անհրաժեշտության դեպքում կարող են կատարվել փոփոխություններ:

Դատողություններ: Ուսանողների հավաքագրման և ընդունելության գործող մեխանիզմները Կենտրոնին թույլ են տալիս վերջին տարիներին ապահովել ուսանողների թիվը 600-ի շրջակայքում, սակայն ղեկավարությունը ցանկություն ունի մեծացնել ուսանողների թիվը: Այդ դեպքում պարզ հաշվետվություններից անհրաժեշտ է անցնել կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծությանը, պարզելու, թե որտեղ և ինչպիսի լրացուցիչ ռեզերվներ կան: Տարիներ շարունակ չպակասող հեռացվողների մեծ թվաքանակը ցույց է տալիս, որ Կենտրոնի կողմից այդ ուղղությամբ իրականացվող քայլերը չեն ծառայում իրենց նպատակին: Փորձագիտական խումբը առաջարկում է գործող կարգերի սահմաններում վերանայել հեռացվողների նկատմամբ կիրառվող քաղաքականությունը և անպայման կիրառել ուսանողների վճարովի համակարգից անվճարի տեղափոխման ռոտացիայի կարգը:

Կենտրոնը չունի ուսանողների կարիքների վերհանման առանձին հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր, սակայն իրականացվող գործողությունները նպաստում են ուսանողների կարիքների վերհանմանանը: Նախ և առաջ դրանք ուսանողական տարբեր հարցումներն են, որոնց արդյունքները քննարկվում են և տարածվում ամբիոններում: Հարցումների արդյունքների հիման վրա բարելավման քայլեր կատարվում են, սակայն մեխանիզմները հստակեցված չեն և դրանց արդյունավետության վերլուծություններ չեն իրականացվում: Մյուս մեխանիզմը ուսանողների ներգրավվածությունն է կառավարման մարմիններում, որտեղ նրանց տոկոսային մասնաբաժինը ցածր է: Ամբիոնների նիստերին խմբերի ավագների մասնակցությունը կանոնակարգված չէ, ինչը կարող է սահմանափակել նրանց ազդեցությունը նիստերի ժամանակ:

ՈՒսանողները ընդհանուր առմամբ (հարցվածների մոտ 80 %-ը) բավարարված են Կենտրոնի կողմից կազմակերպվող լրացուցիչ պարապմունքներից և տրամադրվող խորհրդատվություններից սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների կրթական կարիքների բավարարման արդյունավետությունը ավելանա, եթե կանոնակարգվեին դրանց նպատակները, կազմակերպվեին հստակ ժամանակացույցով և կրեին պարբերական բնույթ: Կանոնակարգման կարիք ունի նաև մասնագիտական դասընթացներից բացակայություններ ունեցող ուսանողների համար լրացուցիչ պարապմունքների կազմակերպման գործընթացը:

Կենտրոնի կողմից սահմանված չեն վարչական աշխատակազմին դիմելու ժամանակացույցը և կանոնակարգը, սակայն դա չի խոչընդոտում, որպեսզի ուսանողները իրենց հուզող խնդիրներով բանավոր դիմեն վարչական աշխատակազմին՝ ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված՝ Ուսանողական խորհրդի միջոցով: Կանոնակարգի առկայությունը ավելի կհստակեցներ գործընթացի իրականացումը և պատասխանատվությունները, այն կդարձներ ավելի արդյունավետ և սահմանափակում կդներ հարցերի քննարկման համար առանձնացվող ժամկետների վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում Շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի գոյությունը և ուսանողների կարիերայի զարգացմանը ուղղված նրա քայլերը, սակայն միաժամանակ գտնում է, որ որակյալ մասնագետների պակասը կարող է ռիսկային գործոն հանդիսանալ՝ բաժնի գործառույթները լիարժեք իրականացնելու համար:

Օգտագործելով ԳԱԱ ինստիտուտների մարդկային, նյութատեխնիկական և լաբորատոր հնարավորությունները՝ Կենտրոնը բարենպաստ միջավայր է ստեղծում ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու համար: Արտադրական ձեռնարկությունների հետ կապի սերտացումը, նրանց հետ համատեղ և համագործակցային սեփական ծրագրերի մշակումը և զարգացումը կարող է ավելացնել ուսանողների կողմից կատարվող կիրառական հետազոտությունները և ֆինանսական օգուտ բերել ուսանողներին և Կենտրոնին:

Կենտրոնում գործում է ուսանողական խորհուրդ, որի գործունեությունը ընդհանուր առմամբ բավարարում է ուսանողներին, չնայած որպես ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին նրա աշխատանքների արդյունավետությունը չի գնահատվել: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը տեղեկացավ փաստերի, որոնք ցույց են տալիս խորհրդի ոչ ամուր դիրքերը Կենտրոնում. օրինակ, սեփական տարածքի բացակայությունը կամ ռոտացիոն համակարգի չգործելը Կենտրոնում ուսանողների բողոքների և օրենքով սահմանված կարգի առկայության պայմաններում:

Որպես ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմ Կենտրոնը կիրառում է ուսանողների և շրջանավարտների հարցումները: Հարցումների արդյունքները, եթե նույնիսկ պարունակում են կոնկրետ տեղեկատվություն վերոնշյալ գործընթացների վերաբերյալ, միևնույն է, առանձին չեն վերլուծվում, և եզակի են դրանց հիման վրա կատարված բարելավումները:

Եզրակացություն: Հաշվի առնելով, որ Կենտրոնում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության քաղաքականությունը ապահովում է ուսանողների կայուն թվաքանակ, կիրառվող մեխանիզմները հիմնականում նպաստում են ուսանողների կարիքների վերհանմանանը, կարևորվում է ուսանողների համար լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության կազմակերպումը, ինչպես նաև ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցումը, ուսանողների համար որոշակի հնարավորություն է ստեղծված միջնորդավորված կամ անմիջականորեն իրենց հուզող խնդիրներով դիմելու վարչական աշխատակազմին, առկա է բարենպաստ միջավայր ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու համար, գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրահանգում: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **բավարար է**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը իրականացնելու համար Կենտրոնը մշակել է «Պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորման» նոր կանոնակարգ, որը սահմանում է հիմնական դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները, տարբեր տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) բնութագրերը, ինչպես նաև տրամադրում է դասախոսների հետ կնքվող պայմանագրերի համակարգը:

Փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ պարզվեց, որ Կենտրոնի հիմնական դասախոսական կազմը ձևավորվում է հետազոտական ինստիտուտների աշխատակիցներից՝ ամբիոնի վարիչի առաջարկությամբ և հրամանագրվում Կենտրոնի տնօրենի կողմից: Դրսից

հրավիրվում են այնպիսի մասնագետներ, որոնք ինստիտուտներում չկան: Ոչ հիմնական դասախոսական կազմի մրցութային ընտրություն նույնպես չի անցկացվում. դասախոսները հրամանագրվում են Կենտրոնի տնօրենի կողմից մինչև մեկ տարի ժամկետով: Կենտրոնում առկա է նաև դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հաստիքների ձևավորման նորմատիվային բազա, սակայն բացակայում են պաշտոնի անձնագրերը:

ԳԿՄԿ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը ներկայումս ներառում է 253 մասնագետներ, որոնցից 22-ը՝ ակադեմիկոսներ են, 55-ը՝ գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ, 176-ը՝ գիտությունների թեկնածուներ, դոցենտներ:

Կենտրոնը դեռ չունի դասավանդողների խրախուսման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր:

5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար համապատասխն որակավորում ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը ապահովում են Գիտակրթական միջազգային կենտրոնի ամբիոնները: Դրանք իրենց ոլորտում հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ բարձր մասնագիտական հմտություններ և պրակտիկ կարողություններ ունեցող կադրեր են: Սակայն հստակ սահմանված չեն այն պահանջները, համաձայն որոնց պետք է որոշվի որպես դասախոս նրանց մասնագիտական որակների համապատասխանությունը ծրագրին կամ դասընթացին: Այդ պատճառով դեռևս հնարավոր չէ գնահատել դասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Կենտրոնում գործող դասախոսական կազմի գնահատման հիմնական մեխանիզմը դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներն են՝ որպես ուսանողների կողմից «դասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման» եղանակ: Ոչ պարբերաբար իրականացվում են դասալսումներ, որոնց անցկացման, արդյունքների վերլուծության և կիրառման համար դեռևս մշակված չեն հստակ պահանջներ և ընթացակարգեր:

Փորձագիտական այցի ժամանակ ինստիտուտների տնօրենները նշեցին նաև 5 տարին մեկ անգամ իրականացվող գիտական անձնակազմի ատեստացիայի մասին, որը Կենտրոնի դասախոսական կազմի համար կարող է դիտարկվել որպես մասնագիտական գնահատում:

Դասախոսական կազմի գնահատման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կենտրոնը նախատեսել է անմիջական ղեկավարի և գործընկեր դասախոսների կողմից պարբերաբար գնահատման, ինչպես նաև ինքնագնահատման գործընթացի ներմուծումը:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Կենտրոնում իրականացվել են դասախոսների որակավորման բարձրացման տարբեր դասընթացներ, մասնավորապես Բոլոնիայի գործընթացի համատեքստում տեղի ունեցող բարեփոխումների շրջանակում: Իրականացվել են բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովմանն ուղղված դասընթաց-սեմինարներ չորս հիմնական ուղղություններով՝ մասնագիական որակավորման բարձրացում, մանկավարժական հմտությունների

կատարելագործում, ուսումնական գործընթացի կազմակերպում կրեդիտային համակարգով և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում դասապրոցեսում:

Որակի ապահովման բաժինի աշխատակիցները նշում են, որ վերապատրաստումների թեմաները ընտրվել և իրականացվել են ներքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Կենտրոնին համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմով ապահովում են ամբիոնները: Յուրաքանչյուր ամբիոն, ապահովում է ուսումնական մոդուլները համապատասխան հիմնական դասախոսական կազմով, ինչպես նաև կազմակերպում է նրանց կարճաժամկետ և երկարաժամկետ փոխարինումը: ԳԱԱ հետազոտական ինստիտուտներում առկա ակադեմիական միջավայրում դասախոսական կազմը հնարավորություն ունի ձեռք բերելու և զարգացնելու անհատական հետաքրքրություններով ու կրթական ծրագրերի պահանջներով պայմանավորված հմտություններ:

Բացի այդ Կենտրոնում իրականացվում է հետազոտական ծրագրերում ընդգրկված ասպիրանտների միջոցով դասախոսական կազմի համալրման և երիտասարդացման նպատակային ծրագիր՝ հաշվի առնելով մասնագիտությունների ցանկի փոփոխությունները: Ամբիոններն ասպիրանտների համար ապահովում են անհրաժեշտ պայմաններ և օգնություն ինչպես մասնագիտական խորհրդատվության, այնպես էլ նյութատեխնիկական միջոցների տրամադրման առումով: Ցուցաբերվում է աջակցություն գործուղումների, միջազգային գիտաժողովներում աշխատանքի արդյունքների ներկայացման և գիտական պարբերականներում հոդվածների տպագրության առումներով: Առկա ուսուցման ձևով սովորող ասպիրանտների համար ստեղծվում են մանկավարժական պրակտիկայի և հետագա աշխատանքի նպաստավոր պայմաններ: Սակայն նկարագրված գործընթացները կանոնակարգված չեն:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացն անմիջականորեն իրականացվում է այն գիտահետազոտական հաստատությունում, որտեղ տվյալ դասախոսն իրականացնում է իր մասնագիտական գործունեությունը որպես հետազոտող՝ ներգրավվելով տվյալ ինստիտուտի մասնակցությամբ իրականացվող ներպետական և միջազգային գիտահետազոտական ծրագրերում: Այս ուղղությամբ Կենտրոնը որևէ մասնակցություն չունի:

ԳԿՄԿ-ն կազմակերպել է ուսումնական գործընթացի իրականացման հետ կապված վերապատրաստումներ երեք ուղղություններով՝ ծրագրերի բարելավման, համակարգչագիտության և մանկավարժական հմտությունների զարգացման:

Ուղորտը կարգավորող մի շարք փաստաթղթեր մշակման փուլում են. օրինակ՝ «Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման» և «Սկսնակ դասավանդողների մենթորության» քաղաքականությունը և ընթացակարգերը:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Վարչական և ուսումնաօժանդակ կազմի պաշտոնների անձնագրերի բացակայության պայմաններում Կենտրոնը գտնում է, որ ինքն ապահովված է համապատասխան որակյալ մասնագետներով: Վարչական կազմի աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է

մագիստրոսների կողմից ստացված կրթությունից բավարարվածության հարցումների օգնությամբ, իսկ ուսումնաօժանդակ աշխատակազմը, որը գործում է ամբիոնների կառույցներում և ուսումնական մասում, հաշվետու է համապատասխան ղեկավարությանը:

Դատողություններ: Կենտրոնը, կարևորելով բարձր մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և օժանդակ կազմերի անհրաժեշտությունը, կիրառում է թափուր պաշտոնների որոշակի ժամկետով պայմանագրային հիմունքներով զբաղեցման մեխանիզմը: Փաստացի ստացվում է այնպես, որ Կենտրոնի դասախոսները հիմնականում հանդիսանում են ԳԱԱ համապատասխան ինստիտուտների հիմնական աշխատակազմի ներկայացուցիչներ, որոնց ընտրում են մասնագիտական ամբիոնների վարիչները՝ Կենտրոնի տնօրենի հետ համաձայնեցված: Այդ մոտեցումը չի համապատասխանում պաշտոնապես հաստատված «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման» կարգի պահանջներին, ՌԾ-ի դրույթներին, ինչպես նաև տվյալ ոլորտում որակի ապահովման չափանիշներին: Պաշտոններին նշանակման եղանակը չպետք է հանդիսանա պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման միակ մեխանիզմը, քանի որ դրանով սահմանափակվում է Կենտրոնի՝ այլ հաստատություններից բարձրորակ կադրեր ներգրավելու հնարավորությունը: Բացի այդ, ընթացակարգերի ամբողջականացման տեսակետից պրոֆեսորադասախոսական կազմի տեղակալման կարգը անհրաժեշտ է լրացնել նրանց խրախուսման և աշխատանքից հեռացման ընթացակարգերով:

Կրթական ծրագրի համար անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ապահովումը Գիտակրթական միջազգային կենտրոնի ամբիոնների պատասխանատվությունն է: Վարիչները առաջնորդվում են մասնագիտական ամբիոնների պաշտոնների մրցույթային կարգում սահմանված դասախոսական տարբեր տարակարգերին ներկայացվող որակական չափանիշների լրակազմով, և Կենտրոնը ներկայումս ապահովված է առաջնակարգ հետազոտական կարողությունների տիրապետող մասնագետներով: Սակայն կարգում ներկայացված պահանջները շատ ընդհանրական են և չեն կարող հստակեցնել կրթական ծրագրերի մակարդակով անհրաժեշտ որակավորումները: Մինչդեռ գործող դասախոսական կազմի կոմպետենցիաները պետք է համապատասխանեն մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին, և դրանք անհրաժեշտ է հստակեցնել ամեն մի ծրագրի համար:

Կենտրոնում ներկայումս գործող դասախոսական կազմի գնահատման մեխանիզմները, որոնք հիմնված են միայն ուսանողական հարցումների և դեկանի կողմից ոչ պարբերաբար իրականացվող դասալսումների վրա, չեն կարող ապահովել հավաստի և վստահելի արդյունքներ, քանի դեռ չեն օգտագործվում ինքնագնահատումը և գործընկերային գնահատումը: Բազմակողմ գնահատումը և ստացված արդյունքների վերլուծումը կարող են վստահելի հիմք հանդիսանալ դասավանդողների վերաբերյալ տարաբնույթ վարչական որոշումներ կայացնելու գործընթացներում՝ խրախուսում, աշխատանքային պայմանագրերի երկարաձգում կամ դադարեցում և այլն:

Կենտրոնը, ի կատարումն իր ներկայիս ՌԾ նպատակների, ինչպես նաև հիմք ընդունելով ՊԴ կազմի գնահատման արդյունքները, զանազան ծրագրերի շրջանակներում իրականացրել է դասավանդողների որակավորման բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ, որոնք սակայն շարունակական չեն և չեն կարող դիտարկվել որպես գիտամեթոդական գործունեության և մասնագիտական կատարելագործման պարբերաբար իրականացվող միջոցառումներ: Կենտրոնին հարկավոր է ձևավորել ՊԴ կազմի որակավորման բարձրացման համակարգ՝ հստակ սահմանված կրթական և վարժանքային ծրագրերի լրակազմի հիման վրա, ինչպես նաև մշակել դրանց իրականացման արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Կենտրոնի մասնագիտական ամբիոնների ՊԴ կազմի ձևավորված լինելը ակադեմիայի գիտական ներուժի հիման վրա ապահովում է այդ կազմի փոխարինելիությունը և

կայունությունը, իսկ նրանց ներգրավվածությունը գերակա գիտահետազոտական ծրագրերում՝ գործնականում ապահովում է դասավանդողների մասնագիտական առաջընթացը: Համապատասխան հետազոտական ծրագրերում ընդգրկված ասպիրանտների միջոցով դասախոսական կազմի համալրման գործընթացի իրականացումը արդեն տալիս է առաջին արդյունքները դասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ, սակայն երիտասարդ դասավանդողների առաջընթացի ապահովման խնդիրները մնում են որպես օրակարգային հարցեր. Կենտրոնը ինքն է գտնում, որ դասախոսական կազմի ծերացման միտումը պահպանվում է:

Կենտրոնի ղեկավարությունը կարևորում է վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմերի շարունակական զարգացման անհրաժեշտությունը, և բավարարված է ներկայիս անձնակազմով: Միևնույն ժամանակ, ներակայումս չի իրականացվում վարչական աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատում՝ անհրաժեշտ մեխանիզմների և գործիքների բացակայության պատճառով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնը ապահովված է հետազոտական բարձր կառողություններով օժտված արհեստավարժ պրոֆեսորադասախոսական կազմով, որը ձևավորվում է ԳԱԱ ինստիտուտների կադրային ներուժի հիման վրա, դասախոսների ընտրության համար մշակված են տարբեր տարակարգերին ներկայացվող որակական չափանիշներ, իրականացվում է դասախոսական կազմի գնահատում ուսանողական հարցումների, դասալսումների և ատեստացիաների միջոցով, դասախոսական կազմը մասնակցել է բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովմանն ուղղված վերապատրաստումների, դասավանդողների ներգրավվածությունը գերակա գիտահետազոտական ծրագրերում գործնականում ապահովում է նրանց մասնագիտական առաջընթացը, իսկ ասպիրանտներին օժանդակելու միջոցով դասախոսական կազմի երիտասարդացման քայլեր են արվում, փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **բավարար է**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հետազոտական ոլորտում Կենտրոնի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարությունը հիմնված է այն դրույթի վրա, որ ՀՀ ԳԱԱ հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող գիտական կազմակերպություն է, որի օրգանական ենթակառուցվածքներից է ԳԿՄԿ-ն: Ակադեմիայի համակարգի գիտահետազոտական ինստիտուտները և գիտաարտադրական կենտրոնները, որոնց կազմում գործում են Կենտրոնի մասնագիտական ամբիոնները, հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ են իրականացնում ֆիզիկամաթեմատիկական, բնական, տեխնիկական և հասարակական գիտությունների կարևորագույն ուղղություններով:

Բացի այդ, Կենտրոնում գործում են 2 խումբ գիտական և գիտատեխնիկական գործունեության ԿԳՆ կողմից բազային ֆինանսավորման ծրագիր շրջանակներում՝

գերհաղորդականության և կենսաինֆորմատիկայի ուղղությամբ և 1 խումբ՝ թեմատիկ ֆինանսավորմամբ՝ բանասիրական ուղղվածությամբ:

Կենտրոնի ՌԾ-ի դրույթներում գործունեության հետազոտական ոլորտի ռազմավարական գերակայությունները արտահայտող բաժին չի առանձնացված, իսկ ոլորտը պաշտոնապես հաստատված որևէ փաստաթղթով չի կանոնակարգվում:

6.2 ՄՌՀՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՌՀՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

2014-2018թ.թ. ՌԾ-ի որոշակի նպատակների իրականացման քայլերում կան պլանավորված գործողություններ, որոնք կարելի է դիտարկել որպես հետազոտության ոլորտում Կենտրոնի հետաքրքրությունները և հավակնությունները: Այդ գործողությունները կամ քայլերը ձևակերպված են շատ ընդհանրական, առանց չափելի վերջնարդյունքների և նույն ձևով տեղ են գտել նաև ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցում:

Կենտրոնում որպես հետազոտական ոլորտի կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագրեր են դիտարկվում ամբիոնների աշխատանքային պլանների գիտական բաժինները, որոնք իրականացվում են համապատասխան ինստիտուտների և կենտրոնների գերակա հետազոտական ծրագրերի շրջանակներում: Դրանց իրականացման արդյունքները ներկայացվում են ամբիոնների տարեկան հաշվետվություններում:

6.3 ՄՌՀՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Փաստացի Կենտրոնի գիտահետազոտական գործունեությունը պլանավորվում, կազմակերպվում և իրականացվում է ամբիոններում, իսկ դրանց համակարգումը կատարվում է մեծամասամբ ինստիտուտների գիտական կառույցների կողմից, քանզի Կենտրոնի կազմակերպչական կառուցվածքում համապատասխան համակարգող կառավարիչ, օրինակ՝ գիտական գծով փոխտնօրեն, չի նախատեսված: Որակյալ հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պատասխանատվությունը նույնպես կրում են ԳԱԱ ինստիտուտները և կենտրոնները՝ հետազոտությունների և զարգացման համար ստանալով բյուջետային և թեմատիկ ֆինանսավորում:

Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու հաստատված քաղաքականություն կենտրոնը չունի, չնայած որ իրականացնում է անհրաժեշտ գործողություններ այդ ուղղությամբ՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն, աջակցելով նրանց հրատարակություններին, մասնակցությանը գիտաժողովներին և այլն: ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր» հիմնադրամի ֆինանսավորմամբ Կենտրոնում իրականացվել է «Արդի հայ հեքիաթի հիմնախնդիրները» հետազոտական նախագիծը:

Հետազոտական գործունեության արդյունքի մշտադիտարկման և որակի գնահատման գործիքներ, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման ցուցիչներ մշակված չեն: Կենտրոնը, ինչպես նաև հետազոտական ինստիտուտները դեռևս չունեն ակադեմիական ազնվությունը (օբյեկտիվությունը) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների կիրառման հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր:

6.4 ՄՌՀՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Չնայած որ որպես առանձին կառույց ԳԿՄԿ-ն իր գործունեությունը փորձում է ուղղել հետազոտական գործունեության միջազգայնացմանը, այնուամենայնիվ միջազգայնացման հիմնական գործոններ են դիտարկվում ՀՀ ԳԱԱ գործող համագործակցության կապերը,

միջազգային դրամաշնորհային ծրագրերը և համատեղ միջոցառումները: ՀՀ ԳԱԱ-ն կուտակել է գիտագործնական համագործակցության մեծ փորձ ԱՊՀ, Եվրոպական և Ասիական երկրների գիտությունների ակադեմիաների և համալսարանների հետ, որի արդյունքում մշակվում են համատեղ ծրագրեր, ստեղծվել են նոր լաբորատորիաներ, օգտագործվում են նրանց լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները՝ միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտություններ իրականացնելու համար: Այս գործունեությունը, իհարկե, համընկնում է Կենտրոնի առաքելության և ռազմավարական նպատակների հետ: Որպես վերջին տարիների հիմնական գիտական նվաճումներ կենտրոնի կողմից ներկայացվում է տարբեր ինստիտուտների և հետազոտական խմբերի ձեռքբերումները միջազգային հետազոտական ծրագրերի շրջանակներում:

Վերջին 5 տարիների Կենտրոնի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետության վերլուծությունը բացակայում է:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԳԱԱ ԳԿՄԿ-ն համարում է իրեն հետազոտական համալսարանի նախատիպ, որտեղ հնարավոր է առավել բարձր արդյունավետությամբ զուգակցել ուսուցման գիտական և կրթական բաղադրիչները: Մագիստրոսական ծրագրերը, ինչպես նաև ասպիրանտի և հայցորդի հետբուհական մասնագիտական ծրագրերի կրթական բաղադրիչները, իրականացվում են ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների մասնագիտական և արդիական ռեսուրսային հենքի վրա:

Կենտրոնի կրթական ծրագրերը կազմված են այնպես, որ նախատեսվում է ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում հենց ուսումնառության սկզբից: Ուսանողները նախ ծանոթանում են ինստիտուտների հետազոտական ուղղվածություններին և թեմաներին, այնուհետ տեխնոլոգիական միջոցներին և լաբորատորիաներին: Ամեն մի մագիստրոս ունի իր ղեկավարը, որն էլ ամբիոնի նիստերին պարբերաբար հաշվետվություն է տալիս նրա ձեռքբերումների մասին:

Հետազոտական բաղադրիչի պահանջ է դրված ինչպես կուրսային աշխատանքների, այնպես էլ մագիստրոսական թեզերի վրա: Թեզերի թեմաները հիմնականում ակադեմիայի ինստիտուտներում և կենտրոններում ընթացող հետազոտությունների վրա են հիմնված:

Բացի այդ լավագույն ուսանողները ներգրավվում են միջազգային ծրագրերում, ինչպես նաև ֆինանսավորվող թեմատիկ հետազոտություններում: Դիտարկված բնագիտական ուղղվածության ամբիոններում ընդունված է «սովորել աշխատելու միջոցով» սկզբունքը, որը թույլ է տալիս ինստիտուտների ղեկավարներին ուսուցման պրոցեսի ավարտին անմիջապես շրջանավարտին ընդգրկել հետազոտական խմբերի աշխատանքներում:

Փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ ուսանողների, դասախոսների և ինստիտուտների ղեկավարների կողմից նշվեց, որ նրանք ընդհանուր առմամբ բավարարված են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ներկա վիճակից, թեև Կենտրոնը այդ հարցի ուղղությամբ ուսումնասիրություններ դեռևս չի իրականացրել:

Դատողություններ: Գործելով ՀՀ ԳԱԱ համակարգում, Կենտրոնը ունի բացառիկ հնարավորություն ծավալելու իր հետազոտական գործունեությունը այնպիսի միջավայրում ուր կենտրոնացված են հանրապետությունում բնական, տեխնիկական և հասարակական գիտությունների ուղղություններով հիմնարար և կիրառական հետազոտություններ իրականացնող գիտական կենտրոնները: Առկա է անհրաժեշտ միջավայր արդյունավետորեն համակցելու ուսուցման գիտական և կրթական բաղադրիչները՝ պատրաստելու բարձր որակավորում ունեցող կադրեր, ինչը բխում է Կենտրոնի առաքելությունից: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գիտական բաղադրիչը պետք է հանդիսանա

հետազոտական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններից մեկը, Կենտրոնը պետք է պաշտոնապես հստակեցնի հետազոտական ոլորտում իր սեփական գերակա նպատակները և խնդիրները:

Հետազոտության ոլորտում Կենտրոնի հետաքրքրությունները և հավակնությունները կարելի է համարել կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերով նախատեսված գործունեությունը, որն իրականացնում են գիտահետազոտական ինստիտուտներում տեղակայված մասնագիտական ամբիոնների աշխատակիցները: Այն չի պլանավորվում Կենտրոնի կողմից, քանի որ ամբիոններն առաջնորդվում են տվյալ գիտական կազմակերպության հետազոտական գերակա ուղղություններով, որը դարձյալ պայմանավորված է Կենտրոնի կառուցվածքային առանձնահատկություններով: Կենտրոնը ընդհանուր առումով չի հետևում իրականացվող հետազոտությունների արդիականացմանը, ներդրումներ չի անում հետազոտության ոլորտում, չի մասնակցում հետազոտության արդյունքների ապրանքայնացմանը և դեռևս իր զարգացումը չի կապում դրա հետ:

Կենտրոնը իր հետազոտական գործունեության միջազգայնացումը մեծամասամբ կառուցում է ՀՀ ԳԱԱ կամ առանձին ինստիտուտների միջազգային կապերի, գործող պայմանագրերի և դրամաշնորհային ծրագրերի հիման վրա: Կենտրոնի համապատասխան ստորաբաժանման մարդկային և տեղեկատվական հնարավորությունները սակավ են հետազոտությունների միջազգայնացմանը նպաստելու տեսակետից: Բացի այդ, նշված ոլորտում ինքնավերլուծության մեջ ներկայացված և փաստացի իրավիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է տեղեկատվության փոխանակման և համագործակցության խնդիր, որը կենտրոնի և հետազոտական ինստիտուտների միջև թույլ կապի հետևանք է: Հնարավոր է, որ գիտահետազոտական հարցերի համակարգողի կամ կենտրոնի և միջամբիոնային միասնական կառավարման և տեղեկատվական համակարգի ներդրման արդյունքում այդ խնդիրը վերանա: Իսկ միջազգայնացման ուղղությամբ Կենտրոնի գործունեության արդյունավետության վերլուծությունը հնարավորություն կտա պարզել քաղաքականության ուժեղ-թույլ կողմերը և մշակել գործողություններ, որոնց իրականացման արդյունքում Կենտրոնը կգրանցի առաջընթաց իր գործունեության այդ ոլորտում:

Հետազոտության արդյունքների միջազգային մակարդակով ճանաչում ապահովելու **համար պարտադիր է իրականացնել հետազոտական գործունեության արդյունքների մշտադիտարկում և որակի գնահատում՝ ըստ աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման ցուցիչների, ինչպես նաև գործադրել ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցներ:**

ԳԿՄԿ-ն արդյունավետ հնարավորություն է ստեղծում ուսուցման գիտական և կրթական բաղադրիչների զուգակցման համար, որի համար հիմք են ծառայում Ակադեմիայի գիտական կազմակերպությունների կադրային և ռեսուրսային հենքը: Ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում հենց ուսումնառության սկզբից, ամեն մի մագիստրոսին առանձին ղեկավարի տրամադրումը, առաջընթացի մասին ղեկավարների պարբերական հաշվետվությունները էականորեն կարող են նպաստել ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորմանը: Դրան նպաստում է նաև հետազոտական բաղադրիչի պահանջը կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերաբերյալ:

Փորձագիտական խումբը դրական է համարում լավագույն ուսանողների ներգրավման պրակտիկան միջազգային ծրագրերում և ֆինանսավորվող թեմատիկ հետազոտություններում, «սովորել աշխատելու միջոցով» սկզբունքը, որոնք տարածման կարիք ունեն որպես լավ փորձի օրինակներ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման իրավիճակի մասին օբյեկտիվ տեղեկատվություն կտան ուսումնասիրությունները, որոնք ցույց կտան, թե ուսանողների, դասախոսների և գործատուների որ տոկոսն է բավարարված այդ գործընթացից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳԿՄԿ-ն ունի բացառիկ հնարավորություն իրականացնելու հետազոտական գործունեություն այնպիսի միջավայրում, ուր կենտրոնացված են մարդկային և տեխնիկական ռեսուրսային հիմնական ներուժը հանրապետությունում, մասնագիտական ամբիոններում իրականացվում են կարճաժամկետ ու երկարաժամկետ հանրապետական և միջազգային նշանակության հետազոտական ծրագրեր՝ ըստ համապատասխան գիտական կազմակերպության հետազոտական գերակա ուղղությունների, իր հետազոտական գործունեության միջազգայնացման համար կարողանում է օգտագործել Ակադեմիայի միջազգային կապերը և գործող պայմանագրերը, ուսանողների համար արդյունավետ հնարավորություն է ստեղծում հետազոտության և ուսումնառության գործընթացների զուգակցման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնը բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **բավարար է**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1.ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Միջազգային գիտաուսումնական կենտրոնի կրթական ծրագրերը հիմնականում իրականցվում են ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում և կենտրոններում, ինչպես նաև ԳԿՄԿ ենթակայության տակ գտնվող լսարաններում: Ուսանողների ուսումնառության և հետազոտական նպատակներին են ծառայում միջազգային չափանիշներին համապատասխանող ՀՀ ԳԱԱ հիմնարար և ինստիտուտներում տեղակայված մասնագիտական շուրջ 30 գրադարանները, շուրջ 20 ընթերցասրահները, 19 լինգոֆոնային կաբինետները: Գրադարանից օգտվողների համար հասանելի են նաև էլեկտրոնային նյութերի և մի շարք ռեսուրսային բազաներ. Elibrary.ru, mathnet.ru, SPRINGER, EBSCO, DOAJ:

Ուսանողների գործնական կարողությունները զարգացնելու համար օգտագործվում են ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական լաբորատորիաները, համակարգչային լսարանները, հեռահար կրթության լսարանները և այլն: Ուսանողների կրթությունը իրականացվում է բարձրակարգ ակադեմիական միջավայրում:

Փորձագիտական այցի ընթացքում փաստվեց, որ ուսումնառության համար հիմնականում տրամադրվում են հետազոտության համար օգտագործվող արդիական ռեսուրսներ, որոնք նպաստում են մագիստրոսական ծրագրերի կրթական վերջնարդյունքների ձևավորմանը: Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների 85%-ը բավարված է ուսումնառության համար անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածությունից:

7.2.ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Կենտրոնի ռեսուրսներով ապահովվածության քաղաքականությունը հիմնված է ՌԾ նպատակների և գործողությունների վրա, համաձայն որոնց տարեկան կտրվածքով պլանավորում է անհրաժեշտ միջոցների և սարքավորումների ձեռքբերման և սպասարկման

ֆինանսական ապահովումը: Կենտրոնի բյուջեն հիմնականում ձևավորվում է հետևյալ աղբյուրներից՝ պետական ֆինանսավորումից, ուսանողների վճարներից ձևավորվող ֆինանսական միջոցներից, արտաբյուջետային միջոցներից, գիտահետազոտական և դրամաշնորհային ծրագրերից: Ծախսերը իրականացվում են նախօրոք կազմված բյուջեի նախահաշվի հիման վրա. բյուջեն հիմնականում ծախսվում է ուսումնական պրոցեսի կազմակերպման վրա, ավելի կոնկրետ աշխատավարձի հոդվածով: Հետազոտությունների կամ հասարակությանը մատուցվող ծառայությունների համար բյուջետային հատկացումներ չեն կատարվում:

Հարկ է նշել կրթական ծրագրերի իրականացման ֆինանսական ապահովման գործում գիտահետազոտական ինստիտուտների զգալի դերը: Գործնականում անհրաժեշտ տեխնիկական, տարածքային և այլ ռեսուրսների համար ֆինանսական միջոցները հատկացվում են ՀՀ ԳԱԱ-ի գիտական ինստիտուտների կողմից, իսկ կենտրոնը իրականացնում է միայն իր անմիջական ենթակայության տակ գտնվող ռեսուրսների ֆինանսական կառավարումը:

7.3.ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Կենտրոնը հաստատված ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն չունի, սակայն փաստացի գործում է բաշխման որոշակի մեխանիզմ. յուրաքանչյուր տարի Կենտրոնի տնօրենը, ուսումնական մասի պետը և հաշվապահը կազմում են հաջորդ տարվա բյուջեի նախահաշիվը, որտեղ արտացոլվում են ֆինանսական միջոցների բաշխման ուղղությունները: Ֆինանսական միջոցների պլանավորման հիմքում ընկած են նախորդ տարիների ընդունելության ցուցանիշների վերլուծությունն ու պլանավորվող տարվա համար կանխատեսումները: Բյուջեի բաշխումը չի իրականացվում ըստ կրթական ծրագրերի, և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձը վճարվում է ըստ հաստիքի, անկախ այն հանգամանքից, թե դասախոսի ուսումնական բեռնվածությունը որ ամբիոնում է իրականացվում: Բյուջեի նախագիծը քննարկվում և հաստատվում է ԳԿՄԿ-ի գիտական խորհրդի նիստում:

Ռեսուրսների բաշխման կիրառվող մեխանիզմ է նաև առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը: Այստեղ կիրառվող մոտեցումը նույնպես կանոնակարգված չէ, և հստակեցված չեն որոշումների կայացման առաջնահերթությունները:

Կենտրոնը ընդունում է բյուջեի ֆինանսական աղբյուրների ընդլայման կարևորությունը: Այդ նպատակով քայլեր են ձեռնարկվում ապահովելու դիմորդների հոսքի կայուն աճ և այլընտրանքային աղբյուրների՝ հիմնականում միջազգային ծրագրերից ստացվող ֆինանսական օժանդակությունը:

7.4.ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները հիմնականում ձևավորվում են ի հաշիվ ՀՀ ԳԱԱ-ի գիտական հաստատությունների տրամադրության տակ եղած ռեսուրսների: Մինչև նոր ծրագրերի արտոնումը արդեն ինստիտուտը պետք է ցույց տա, որ տիրապետում է անհրաժեշտ ռեսուրսների և ներկայացնի լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման անհրաժեշտությունը: Լաբորատոր սարքավորումների և գույքի ձեռքբերումը նույնպես ինստիտուտների կամ դրամաշնորհային ծրագրերի հաշվին է տեղի ունենում: ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական

գրադարանի ֆոնդերի համալրումը արդի մասնագիտական գրականությամբ և այլ օժանդակ ռեսուրսներով տեղի է ունենում ԳԱԱ ֆինանսավորմամբ:

ԳԿՄԿ-ն ռեսուրսներ է տրամադրում դասապրոցեսի կազմակերպման և դրա հետ կապված ընթացիկ ծախսվող նյութերի ձեռքբերման համար: Ուսումնական պրոցեսի համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված, իսկ դրանց բաշխումը՝ ըստ առանձին ստորաբաժանումների հայտերի:

Այս իրավիճակը որոշակի կայունություն է ապահովում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար:

Ըստ ռազմավարական խնդիրների ռեսուրսների հստակ բաշխում Կենտրոնը դեռևս չի իրականացնում. ոչ ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը, ոչ էլ տարեկան բյուջեների նախահաշիվները ըստ ռազմավարական նպատակների կամ խնդիրի ռեսուրսների բաշխում չեն պարունակում:

Ուսուցման գործընթացների որակի ապահովման համար ռեսուրսներ տրամադրվում են միայն որակի ապահովման բաժնին:

7.5. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Կենտրոնում գործում են որոշակի մեխանիզմներ և գործիքներ, որոնք ուղղված են տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների կառավարմանը: Դրան են ծառայում մասնավորապես՝ 2015թ. վերանայված նոր կայքէջը և էլեկտրոնային տեղեկատվական կառավարման համակարգը, որոնց միջոցով արտաքին և ներքին շահակիցները տեղեկացված են լինում Կենտրոնում իրականացվող ուսումնական, վարչական, հետազոտական և այլ տեսակի գործընթացների մասին: Կենտրոնում գործում է նաև վարչական որոշումների և հրամանների կատարման կանոնակարգված գործընթաց, որի վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվությունը համակարգչային ցանցի միջոցով տրամադրվում է ներքին շահակիցներին:

Կենտրոնը մշակել է հանրային կապերի հայեցակարգ, որում ուրվագծված են պատասխանատու ստորաբաժանումների գործունեության ոլորտները և գործառույթները:

7.6. ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ԳԱԱ համակարգի ինստիտուտներում առկա անվտանգության պահպանման ենթակառուցվածքները և անձնակազմը ծառայում են նաև ԳԿՄԿ ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմին: Կենտրոնի տարածքի անվտանգությունն ապահովելու և վերահսկելու համար տարբեր հատվածներում տեղադրված են տեսանկարահանող սարքեր, իսկ հակահրդեհային միջոցներ առկա են կենտրոնի տրամադրության տակ եղած տարածքներում և գիտական կենտրոններում:

Կենտրոնը չունի հանրակացարան, և վերջերս է ձեռնամուխ եղել բուժկետի կառուցման աշխատանքներին: Կենտրոնի ամբիոնները հիմնականում հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսուցման կազմակերպման համար:

7.7. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Կենտրոնի որակի բաժնի կողմից անցկացվող ուսանողական հարցումները ընդգրկում են հարցեր, որոնք վերաբերում են կրթական ծրագրերի համապատասխան անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, մասնագիտական գրականությամբ և ուսումնամեթոդական այլ նյութերով բավարարվածությանը, բայց ոչ դրանց կիրառելիությանն ու արդյունավետության գնահատմանը: Իսկ դասախոսական կազմի

ներկայացուցիչների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ հանդիպման մասնակիցները դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների գնահատման որևէ մեխանիզմի ծանոթ չեն:

Դատողություններ: ԳԿՄԿ կողմից օգտագործվող ԳԱԱ գիտական ինստիտուտների ժամանակակից լաբորատոր և նյութատեխնիկական բազան, ԳԱԱ ֆունդամենտալ և ինստիտուտներում տեղակայված գրադարանների ռեսուրսները և ընթերցասրահները, անհրաժեշտ տեխնիկայով համալրված համակարգչային և ուսումնական լսարանները, ինստիտուտներում առկա ակադեմիական միջավայրը ապահովում են բարենպաստ պայմաններ Կենտրոնի ՄԿԾ-ների իրականացման համար և նպաստում են կրթական վերջնարդյունքների ձևավորմանը:

Կենտրոնում առկա են ֆինանսական ռեսուրսների բաշխման որոշ ընթացակարգեր, սակայն չկա հստակ քաղաքականություն. սահմանված չեն ֆինանսական միջոցներին համապատասխան գործունեության պլանավորման սկզբունքները, ֆինանսների կառավարման և մշտադիտարկման, ծախսերի նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմները, ռեսուրսների բաշխման առաջնահերթությունները կամ դրանց որոշման սկզբունքները: Որպես ֆինանսական ռեսուրսների բաշխման հիմք որոշ առումով ծառայում են նախորդ տարվա ծախսերը և պլանավորվող տարվա համար կանխատեսումները. հստակ պլանավորում ըստ կրթական ծրագրերի կամ ռազմական պլանի նպատակների չի իրականացվում: Հարկ է նշել, որ Կենտրոնում ֆինանսական պլանավորումը փաստացի իրականացվում է ըստ անհարժեշտության, քանի որ գործընթացը դեռևս չունի կանոնակարգված ընթացակարգեր: Վերը թվարկած խնդիրները կարելի է լուծել հստակ ֆինանսական քաղաքականության մշակման և հետևողական իրականացման դեպքում: Հաշվի առնելով ԳԱԱ ինստիտուտների տրամադրած ռեսուրսները՝ ԳԿՄԿ-ն հիմնականում ապահովված է անհրաժեշտ ռեսուրսներով կրթական ծրագրերի և ռազմավարական խնդիրների լուծման համար, սակայն որակի ապահովման գործընթացները առանձին ֆինանսավորման կարիք ունեն:

Կենտրոնում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է որոշակի ընթացակարգերով, չնայած որ ոլորտը ընդհանուր կանոնակարգված չէ: Տեղեկատվության արտաքին և ներքին շրջանառության գործընթացները հիմնված են որոշակի սկզբունքների՝ հասանելիության, թափանցիկության, հարմարավետության վրա: Այդ առումով դրական է այն հանգամանքը, որ Կենտրոնը ստեղծել է էլեկտրոնային տեղեկատվական կառավարման համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար:

Կենտրոնը գործարկում է ուսումնառողների անձնական և հակահրդեհային անվտանգության ապահովման որոշակի միջոցառումներ, սակայն առողջապահական ծառայությունները դեռևս չեն գործում: Եթե Կենտրոնի ամբիոնները հարմարեցվեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար, ապա հնարավոր կլինի նման խնդիրներ ունեցող ուսանողների ուսուցման կազմակերպում, և դրա հաշվին ուանողների թվի աճ:

Չուսումնասիրելով դասավանդողների կարծիքը, ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացնելով միայն բավարարվածության հարցումներ՝ Կենտրոնի ղեկավարությունը խնդիրներ կունենա ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը վերլուծելու գործընթացում: Իսկ միայն վստահելի գնահատականների առկայության դեպքում կարելի է հիմնավորված որոշումներ կայացնել ռեսուրսների տրամադրման կամ վերաբաշխման վերաբերյալ: Եվ միայն դրանից հետո՝ հաջորդ քայլում իմաստ կունենա վերլուծել արդյունավետությունը գնահատող մեխանիզմները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հետազոտական ինստիտուտների և Կենտրոնի առկա լսարանային, լաբորատոր, գրադարանային ռեսուրսները և դասախոսական կազմը ձևավորում են ուսումնառության արդյունավետ միջավայր, ծրագրերի իրականացման

հետազոտական մասի ֆինանսական ապահովումը իրականացվում են ԳԱԱ ինստիտուտների կողմից, իսկ Կենտրոնը իր հնարավորությունների սահմաններում տրամադրում է միջոցներ դասապրոցեսի կազմակերպմանը, մշակված են տեղեկատվության հավաքագրման գործիքներ, առկա են բավարար ռեսուրսներ կրթական ծրագրերի կայուն իրականացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **բավարար է:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Կենտրոնում կրթության, հետազոտության և օգտագործված ռեսուրսների վերաբերյալ հաշվետվողականությունը ապահովվում է գործող մեխանիզմով և կառուցվում է ներքևից վերև. ամբիոնների ուսումնագիտական, վարչատնտեսական ստորաբաժանումների հաշվետվությունները և դրանց հիման վրա կառուցված տնօրենի տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը: Կենտրոնը պատրաստում է նաև տարեկան ֆինանսական հաշվետվություն, որը ներկայացվում է ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ժամանակացույցով: Տնօրենի տարեկան հաշվետվությունները հանդիսանում են նաև ՌԾ-ի կատարողականի վերահսկման մեխանիզմ: Այցի ընթացքում ուսումնասիրված ամբիոնային և տնօրենության հաշվետվությունները ցույց տվեցին, որ նրանցում Կենտրոնի գործունեության ոչ բոլոր ոլորտներն են լուսաբանվում: Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները մշակման փուլում են:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Կենտրոնը կարևորելով իր գործունեության թափանցիկության և հասանելիության ապահովումը ներքին և արտաքին շահակիցների համար, տարբեր տպագրական և էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ հասարակությանը տեղեկատվություն է տրամադրում իր գործունեության վերաբերյալ. դրանք են՝ տարեկան հաշվետվությունները, ինտերնետային կայքը, ֆեյսբուքյան և թվիթերային էջերը, Յութուբյան ալիքը, «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսը, «Գիտական հոդվածների ժողովածու» գիտական տարեգրքը և այլն: Նման եղանակներով Կենտրոնն իր գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կանոնակարգող և ընթացակարգային փաստաթղթերը, նորությունները և հայտարարությունները հասանելի է դարձնում ներքին և արտաքին շահակիցներին:

Կենտրոնում գործում է Ուսումնական աշխատանքների կազմակերպման և կառավարման էլեկտրոնային համակարգ, որի աշխատանքին փորձագիտական խումբը մանրամասն ծանոնաթացավ այցի ընթացքում:

Կենտրոնը 2014թ վերամշակել է բոլոր կրթական ծրագրերի Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքերը, որոնք առցանց

հասանելի են Կենտրոնի կայքում: Դրանով տեղեկատվություն է տրամադրվում իրականացվող ծրագրերի բովանդակության և շնորհվող որակավորումների մասին:

Սակայն հարկ է նշել, որ քիչ են Կենտրոնի կողմից իրականացված այն գործընթացների վերլուծությունները, որոնք հասանելի են արտաքին շահակիցներին, ինչպես նաև Կենտրոնը չի իրականացվում հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետության գնահատում կամ մոնիտորինգ:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Կենտրոնում 2014թ. հաստատվել է հանրային կապերի հայեցակարգը, որով սահմանվում է ԳԿՄԿ-ի՝ հասարակայնության հետ կապերի խնդիրները և հանրային կապերի ոլորտի գործառույթները: Համաձայն հայեցակարգի դրույթների, հանրային կապերի ոլորտում գործառույթներն իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնում են Կենտրոնի 4 բաժիններ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթության որակի ապահովման, արտաքին կապերի և շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի: Կենտրոնը հասարակության հետ հակադարձ կապի գործիքներ է համարում իր պաշտոնական ինտերնետային կայքէջը, Կենտրոնի և ԳԿՄԿ ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջերը, չնայած կայքը ինտերակտիվ չէ:

Կենտրոնն ընդունում է, որ իր նկատմամբ ունեցած հասարակական կարծիքի ուսումնասիրման մեխանիզմերը բացակայում են, բացի այդ հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող գործող մեխանիզմների արդյունավետության վերլուծություն Կենտրոնը չի իրականացրել:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Որպես հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման կարևոր ձեռքբերում Կենտրոնը մատնանշում է հեռավար շարունակական կրթական ծրագրերի կազմակերպումը: Այցի ընթացքում պարզվեց, որ ներկայումս Կենտրոնը աշխատանքներ է տանում հեռավար կրթական ծրագրերի լիցենզավորման համար: Հասարակությանը գիտելիքների փոխանցմանն են ծառայում ԳԱԱ գրադարանը, հրատարակչությունը և հոգեբանական դիտարանը:

Հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման գործիքները մշակման փուլում են:

Դատողություններ: Կենտրոնում ընդունված հաշվետվողականության համակարգը հիմնված է բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների վրա, որոնց հիման վրա պատրաստվող տնօրենի հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը: Այնուհետև տվյալները ներառվում են ՀՀ ԳԱԱ տարեկան զեկույցներում և հրապարակվում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտական և Գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետվությունում: Դրանով ապահովվում է իր գործունեության վերաբերյալ հասարակությանը իրազեկ պահելը, պարբերաբար թարմացվող տեղեկատվության տրամադրումը և հասարակական պատասխանատվությունը: Սակայն գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմի բացակայության պայմաններում դժվար է հաշվետվություններում տրամադրել անաչառ, օբյեկտիվ և ամբողջական տեղեկատվություն՝ վեր հանելով գործունեության առաջընթացը կամ բացթողումները: Բացի այդ, ոլորտի համակարգման համար կարևոր են հաշվետվողականությունն ապահովող քաղաքականության և ընթացակարգերի, ինչպես նաև

հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքների մշակումը:

Կենտրոնը, օգտագործելով տարբեր միջոցներ ու ձևեր, ձգտում է ներքին և արտաքին շահակիցներին, հասարակությանը տրամադրել իր գործունեության վերաբերյալ բազմաբնույթ, ամբողջական և օբյեկտիվ տեղեկատվություն, ապահովելով դրա հասանելիությունը և իր գործունեության թափանցիկությունը: Փորձագիտական խումբը նշում է, որ Կենտրոնը չի իրականացնում հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետության գնահատում, ինչը թույլ չի տալիս արտաքին տեղեկատվության գործընթացներում վեր հանել և վերացնել նկատված թերություններն ու բացթողումները:

Կարևորելով հասարակայնության հետ կապերի շարունակական բարելավումը և ընդլայնումը, Կենտրոնը հաստատել է հանրային կապերի հայեցակարգ, ուրվագծելով տվյալ ուղղությամբ պատասխանատու ստորաբաժանումների իրավասությունները, **գործառույթները և խնդիրները, ինչը հնարավություն կընձեռի կենտրոնին պատշաճ մակարդակով համակարգելու իր գործունեության տվյալ ոլորտը: Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող գործող մեխանիզմների արդյունավետության վերլուծությունը Կենտրոնին թույլ կտա հիմնավորել կիրառվող մեխանիզմների պիտանիությունը կամ իրականացնել բարելավումներ գնահատումների հիման վրա:**

Գործելով ՀՀ ԳԱԱ համակարգում գիտակրթական միջազգային կենտրոնը ծավալում է բազմաբնույթ գործունեություն, որը միտված է հասարակության լայն շրջանակների մոտ գիտական, կրթական, հոգևոր, մտավոր և ազգապահպանման արժեքների դաստիարակությանը, ամրապնդմանը ու տարածմանը: Այն բխում է Կենտրոնի առաքելությունից և ռազմավարական նպատակներից: Որպես այդպիսին Կենտրոնում առավել հաջողված գործառույթներից է հնդիսանում հեռավար շարունակական կրթական ծրագրերի կազմակերպումը և իրականացումը: Կենտրոնում մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատում չիրականացնելու պատճառը գործիքամիջոցների բացակայությունն է:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնը որպես հաշվետվողականության մեխանիզմ կիրառում է տնօրենի և ստորաբաժանումների հաշվետվությունները, հանրությանը հասանելի են փաստաթղթեր, որոնք ապահովում են գործունեության թափանցիկությունը, մշակված են հանրության հետ կապերի հայեցակարգ և առկա են կապեր հասարակության հետ, ունի մեծ գրադարան, հրատարակչություն, հոգեբանական դիտարան, առկա են գործընթացներ, որոնք թույլ են տալիս գիտելիքի փոխանցումը հանրությանը հիմնականում հեռավար կրթության միջոցով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **բավարար է**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը կարևորում է կրթության միջազգայնացումը և փորձի փոխանակումը, ինչը հստակ արտացոլված է Կենտրոնի Ռազմավարական Ծրագրում. *«Կենտրոնի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացների, Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման խթանում, միջազգային կապերի ընդլայնում, Եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական համագործակցության, միջազգային փոխանակման ծրագրերին ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցության խթանում»*:

Միևնույն ժամանակ արտաքին կապերի զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող ռազմավարական խնդիրների իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր Կենտրոնի կողմից մշակված չեն: Նման ընթացակարգեր չկան նաև այն ինստիտուտներում, որտեղ տեղակայված են ամբիոնները, և որոնք Կենտրոնից անկախ իրականացնում են հետազոտական գործունեության միջազգայնացման որոշակի գործունեություն:

Կենտրոնը դեռևս չի հստակեցրել իր գործունեության միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման հիմնական մեխանիզմները: Այցի ժամանակ տեղի ունեցած տարբեր հանդիպումներից փորձագիտական խումբը եկավ այն եզրակացության, որ նման մեխանիզմներ գործում են, սակայն չեն համակարգվում Կենտրոնի կողմից, մասնավորապես, փորձի փոխանակման նպատակով իրականացվող աշխատակիցների փոխադարձ այցելությունները, մասնակցությունը միջազգային հետազոտական ծրագրերին, դրամաշնորհներին, գիտաժողովներին, արտասահմանյան բուհերում իրականացվող վերապատրաստումներին և այլն: Փորձի փոխանակմանը և միջազգայնացմանը նպաստող **քաղաքականության և գործող մեխանիզմների ազդեցության և արդյունավետության համակարգված վերլուծություն Կենտրոնում չի իրականացվում:**

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

2010թ. Կենտրոնում ստեղծվել է առանձին ստորաբաժանում՝ Միջազգային կապերի բաժին, որի հիմնական նպատակն է ապահովել համագործակցությունը օտարերկրյա և ներպետական ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների միջև, նպաստել ուսանողների, դասախոսների և վարչական կազմի մասնակցությանը փոխանակման ծրագրերին: Ստորաբաժանման գործունեության ընդհանուր համակարգումը իրականացնում է բաժնի պետը և կատարված աշխատանքների համար անմիջականորեն հաշվետու է ԳԿՄԿ տնօրենին: Միջազգային կապերի բաժնում փաստացի աշխատում են 2 մասնագետ, որոնք իրենց հիմնական գործառութերից զատ միաժամանակ իրականացնում են այլ բազմաբնույթ տեխնիկական ու կազմակերպչական գործառույթներ:

Կենտրոնում գտնում են, որ միջազգայնացման գործընթացների արդյունավետության վրա բացասական են ազդում միջազգային ծրագրերի և նախագծերի վերաբերյալ տարածվող տեղեկատվության պակասը ամբիոններում և դրանց նկատմամբ պոտենցիալ մասնակիցների ցածր մոտիվացիան՝ հիմնականում անգլերեն լեզվի ոչ բավարար իմացության պատճառով: Նույն կերպ, համարում են, որ կնքված բազմաթիվ պայմանագրերի և համաձայնագրերի չգործելու հիմնական պատճառներից է Միջազգային կապերի բաժնի աշխատակազմի սակավությունը:

Կենտրոնում ներդրվել է տեխնիկապես ապահովված հեռավար ուսուցման հարթակ, ստեղծվել է նաև առցանց գիտաժողովի դահլիճ, որտեղ ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն լսելու դասախոսություններ արտերկրի առաջատար մասնագետների կողմից: Կենտրոնն ունի նաև իրական հնարավորություններ օգտագործելու ԳԱԱ ինստիտուտների միջազգային գործունեությունը իր արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ապահովման համար, սակայն այդ ուղղությամբ թույլ է

համագործակցությունը ինստիտուտների հետ և չկան անհրաժեշտ որակավորմամբ ու քանակով մասնագետներ համակարգված գործընթաց իրականացնելու համար:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Կենտրոնը կնքել է համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր մի շարք միջազգային հաստատությունների և կառույցների հետ (ԱՄՆ, ԱՊՀ, Եվրոպա, Մերձավոր Արևելքի երկրներից և այլն): Սակայն, կնքված միջազգային պայմանագրերի գործարկման բաղադրիչի թերի մշակվածության պատճառով դրանք հիմնականում չեն գործում: Կնքված միջազգային պայմանագրերի գործնականում իրականացմանն ու մշտադիտարկմանը խոչընդոտում է նաև արտաքին կապերի բաժնի աշխատակազմի որակյալ մասնագետների սակավությունը, ինչպես նաև ծանրաբեռնվածությունը այլ գործառույթներով:

Միջազգային համագործակցության արդյունքում ԳԿՄԿ-ի ձեռքբերումներից փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում նշել.

ա) 2009-2013թթ. Եվրամիության Տեմպուս-Տասիս ծրագրի շրջանակներում հիմնադրվել է եվրոպական կրթական չափորոշիչներին համապատասխան նոր մագիստրոսական ծրագիր՝ «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» մասնագիտության գծով, որը հաջողությամբ գործում է մինչև այժմ,

բ) 2013թ. եվրոպական գործընկեր Պարմայի և Միդլսեքս Կենտրոնների հետ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում մեկնարկել է լրացուցիչ հեռավար շարունակական կրթության կազմակերպման ծրագիր. մշակվել են համապատասխան ծրագրեր, նյութեր և ուղեցույցներ, դասախոսների **վերապատրաստում, հայերեն է թարգմանվել «ՄՈՒԴԼ» համակարգը, որը ներկայումս նույնպես կիրառվում է,**

գ) 2013թ. ԳԿՄԿ-ն շուրջ 20 հայկական և եվրոպական առաջատար բուհերի և կրթական կազմակերպությունների հետ համատեղ մասնակցում է Տեմպուսի ֆինանսավորմամբ իրականացվող «Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագրին, որի նպատակն է բարելավել Հայաստանի հետբուհական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին,

դ) 2014թ. զբոսաշրջության ոլորտում միջազգային ճանաչում ունեցող AMADEUS ընկերության հետ կնքված պայմանագրի շնորհիվ տուրիզմի կառավարում բաժնի ուսանողները հնարավորություն են ստացել մուտք գործել AMADEUS համակարգ, Կենտրոնի աշխատակիցները և դասախոսները մասնակցել են վերապատրաստման դասընթացների և ստացել համապատասխան հավաստագրեր AMADEUS ծրագրով աշխատելու վերաբերյալ:

Մյուս կողմից, խումբը անհրաժեշտ է գտնում նշել, որ քիչ են Կենտրոնի աշխատանքները ներկայացնող օտարալեզու նյութերը, շատ ցածր է երկարաժամկետ համագործակցային ծրագրերով ուսանողների և դասախոսների ներհոսքը և արտահոսքը: Կենտրոնը չունի օտար լեզվով իրականացվող կրթական ծրագրեր, պրակտիկայի կամ համագործակցության կարճ ծրագրեր, որոնք գրավիչ լինեն տեղական կամ միջազգային շահակիցների համար: Հարկ է նշել նաև, որ չեն իրականացվում այլ ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների հետ համատեղ կամ կրկնակի դիպլոմ շնորհող մագիստրոսական ծրագրեր:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Միջազգային համագործակցային ծրագրերում ներգրավվածության ընդլայնման նպատակով Կենտրոնը ձգտում է ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների օտար լեզուների իմացության բավարար մակարդակ՝ իրականացնելով վերապատրաստումներ: Սակայն վերապատրաստումները բավարար չեն օտար լեզվի

իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման, ինչպես նաև միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար, քանի որ այն չի կրում շարունակական բնույթ և իրականացվում է պայմանագրերի և ծրագրերի շրջանակներում: Կենտրոնն ընդունում է, որ օտար լեզուների իմացության ցածր մակարդակն է միջազգայնացման գործընթացների խոչընդոտող հիմնական պատճառներից մեկը:

Միևնույն ժամանակ չկան օտար լեզվով դասավանդվող առարկաներ և ծրագրեր, չնայած այն հանգամանքին, որ համաձայն ինքնավերլուծության մեջ ներկայացված տեղեկատվության, օտար լեզուներին տիրապետող դասավանդողների թիվը, ըստ 2014թ տվյալների, կազմում է 176 հոգի:

Դատողություններ: Կենտրոնը չունենալով արտաքին կապերի հաստատումը խրախուսող առանձին փաստաթղթավորված քաղաքականություն ու ընթացակարգեր, այնուհանդերձ, հիմնվելով տվյալ ոլորտում իր գործառույթները ուղղորդող ՌԾ-ի համապատասխան նպատակների և դրանցից բխող գործողությունների վրա, ծավալում է որոշակի գործունեություն միտված միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը: Այն հիմնականում հիմնված է ԳԱԱ և գիտական ինստիտուտներում գործող միջազգային կապերի և ծրագրերի վրա: Այդ առումով հարկ է փաստել տվյալ ոլորտում Կենտրոնի պատասխանատու ստորաբաժանման ոչ արդյունավետ գործունեությունը, որը մասնավորապես բացատրվում է կոնկրետ գործողությունների ծրագրերի և որակյալ մասնագետների սակավությամբ: Բացի այդ, ամբիոններում փաստում են, որ թիրախային խմբերի համար միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության խնդիր կա, ինչը վկայում է Կենտրոնի և ԳԱԱ գիտական ինստիտուտներում տեղակայված ամիբիոնների միջև թույլ կապի և տվյալ ոլորտում չկանոնակարգված գործընթացների մասին:

Կենտրոնի արդյունավետ համագործակցությանը միջազգային հաստատությունների և կառույցների հետ խոչընդոտում է նաև Կենտրոնի ՄԿԾ-ների ցածր գրավչությունը միջազգային ասպարեզում, նրանց ոչ համադրելի լինելը արտերկրի համալսարանների նմանատիպ ծրագրերի հետ, օտար լեզվով իրականացվող, համատեղ և կրկնակի դիպլոմներ շնորհող ծրագրերի բացակայությունը:

Ընդհանուր առմամբ, Կենտրոնը կարևորում է օտար լեզվի իմացությունը և հնարավորություն է ստեղծում ուսանողների և դասավանդողների լրացուցիչ ուսուցման և կատարելագործման համար, սակայն սույն գործընթացը դեռևս չի ունեցել շոշափելի ազդեցություն միջազգային փոխանակման ծրագրերում նրանց մասնակցության առումով, ինչպես նաև օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող դասընթացների կամ ՄԿԾ-ների թվի աճի վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնը արդյունավետ չի օգտագործում ԳԱԱ և գիտական ինստիտուտների միջազգային կապերը իր զարգացման և առաքելության միջազգային բաղադրիչի իրականացման համար, պատասխանատու ենթակառուցվածքը չունի անհրաժեշտ որակավորմամբ ու քանակով մասնագետներ և չի իրականացնում կանոնակարգված գործընթացներ, կնքված միջազգային և տեղական համագործակցության պայմանագրերը արդյունավետ չեն իրականացվում, Կենտրոնում կարևորվում է օտար լեզվի իմացությունը և հնարավորություն է ստեղծվում ներքին շահակիցների կատարելագործվելու համար, սակայն առկա մակարդակը դեռևս բավարար չէ ուսանողների և դասավանդողների մասնակցությունը միջազգային ծրագրերում ավելացնելու համար, փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը չի բավարարում չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **անբավարար է**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Կենտրոնի ՈԱ հայեցակարգը և քաղաքականությունը հաստատվել են Գիտական խորհուրդի կողմից 2014թ.: Դրանք, ինչպես նաև ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքը և Կենտրոնի որակի ապահովման հիմնական բնագավառները ներկայացված են Որակի ապահովման ձեռնարկում, որը մշակվել է ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրով ԿԳ նախարարության տրամադրած դրամաշնորհի շրջանակներում: Ձեռնարկում ձևակերպված են Կենտրոնի որակի ապահովման քաղաքականությունը, նկարագրված են որակի ապահովման սկզբունքները և տրված է պատասխանատվությունների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների ու ստորաբաժանումների միջև: Ձեռնարկում տրված են նաև ՈԱ հիմնական 7 ոլորտները (Կրթական ծրագրեր և դասընթացներ, Պրոֆեսորադասախոսական կազմ, Դասավանդում և ուսումնառություն, Ուսանողների գնահատումը, Ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, Գիտահետազոտական գործունեություն և Հանրային ներգրավում): «ԳԿՄԿ Որակի ապահովման գործընթացները և ընթացակարգերը» բաժինը մասամբ նկարագրում է գործընթացները, սակայն չի անդրադառնում սահմանված ընթացակարգերին:

ՈԱ համակարգին առնչվող բոլոր պաշտոնական առանձին փաստաթղթերի հասանելիությունը շահակիցներին նույնիսկ ամբիոններում սահմանափակ է, քանի որ այն հնարավոր է միայն գրքույկի տեսքով կայքի «Ձեռնարկներ» բաժնում: Որակի ապահովման բաժինը ունի իր առանձին էջը Կենտրոնի կայքում, որտեղ ներկայացված են բաժնի խնդիրները և գործառույթները: Ապագայում նախատեսվում է ստեղծել ՈԱ և հավատարմագրման առցանց ռեսուրսային շտեմարան, որտեղ կտեղադրվեն ՈԱ համակարգի բոլոր կանոնակարգող փաստաթղթերը[21]:

Որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն Կենտրոնի կողմից դեռևս չի իրականացվել, իսկ դրանց ազդեցությունը չի գնահատվել:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժինը ստեղծվել է Կենտրոնի Գիտական խորհրդի որոշմամբ 2013թ. ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Նույն ծրագրով որակի կենտրոնը ապահովվել է անհրաժեշտ գրասենյակային տեխնիկայով, կահույքով և նյութական ռեսուրսներով: Այցի ընթացքում փորձագիտական խմբի կողմից բաժնի գործունեության պայմանների, կադրային ապահովվածության վիճակի դիտարկումները փաստեցին, որ ներկայումս բաժինը ունի գրասենյակ, անհրաժեշտ տեխնիկա, սակայն բաժնի կանոնադրությամբ նախատեսված հաստիքացուցակը ամբողջովին համալրված չէ: Իր գործառույթներում, մասնավորապես, զանազան շահակիցների շրջանակներում էլեկտրոնային հարցումների կազմակերպման և

[21] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

իրականացման գործընթացներում, Որակի ապահովման բաժինը սերտորեն համագործակցում է տեղեկատվական բաժնի աշխատակիցների հետ:

2014թ-ից Կենտրոնում ԳԽ-ին կից գործում է նաև Որակի ապահովման մշտական հանձնաժողով, որի գործունեությունը կանոնակարգված է. հանձաժողովը կոչված է ձևավորելու ՈԱ գործընթացների կանոնակարգային և մեթոդաբանական հենքը: Որակի ապահովման ձեռնարկում Կենտրոնի Որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքի սխեմայում այս հանձնաժողովը բացակայում է, ինչպես նաև մի շարք այլ պատասխանատուներ: Կենտրոնի որակի ապահովման համակարգի կառուցվածքով նախատեսված մյուս դերակատարները (Ամբիոնների որակի կառավարման պատասխանատուներ և Ամբիոնային որակի ապահովման ներկայացուցիչներ) ըստ Որակի ապահովման ձեռնարկի ունեն սահմանված գործառույթներ, սակայն նրանց գործունեության մասին ամբիոններում տեղեկացված չեն: Այցի ընթացքում փաստվեց նաև, որ բացի վերոնշյալ ռեսուրսներից, Կենտրոնը մարդկային և ֆինանսական ռեսուրսներ է հատկացնում ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումների անցկացման համար:

Որակի ապահովման բաժնի աշխատակիցները գտնում են, որ գործընթացների իրականացման անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ առկա են, չնայած որ բավարարության գնահատում և վերլուծություն Կենտրոնը չի իրականացրել: Հարկ է նշել նաև, որ ՈԱ գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական և նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը դեռևս գտնվում են մշակման փուլում:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Կենտրոնի ներքին և արտաքին շահակիցները ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում կանոնակարգված է ՈԱ ձեռնարկում: Կենտրոնի կողմից որդեգրվել են «Անձնակազմի ընդլայնված մասնակցության» և «Ուսանողների և արտաքին գնահատողների ներգրավման» Որակի ապահովման սկզբունքները: Դրանք ներառում են ուսանողների մասնակցությունը ուսուցման որակի գնահատման հարցումներին և կրթական ծրագրերից շրջանավարտների բավարարվածության հարցումները: Ուսանողության ներկայացուցիչներ ընդգրկված են գիտական խորհրդում, որակի ապահովման հանձնաժողովում. ինքնավերլուծության խմբի աշխատանքներին նույնպես մեկ ուսանող է մասնակցել: Արտաքին շահակիցների շրջանակներում իրականացվում են շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներ, ինչպես նաև գործատուները մասնակցում են շրջանավարտների եզրափակիչ ատեստավորման հանձնաժողովներում: Որոշ կրթական ծրագրեր արտաքին փորձագետների կողմից ենթարկվել են փորձաքննության:

Կենտրոնի Որակի ապահովման հիմնական գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցության մեխանիզմները հստակեցված չեն: Կենտրոնը չի վերլուծում շահակիցների մասնակցության աստիճանը որակի ապահովման գործընթացներին և դրա արդյունավետությունը:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Կենտրոնի ՈԱ համակարգը ամբողջապես ձևավորված չէ և դեռևս չի իրականացրել իր գործունեության արդյունավետության գնահատում: Կենտրոնը կարևորում է որակի շարունակական բարելավումը որպես իր քաղաքականության կարևորագույն սկզբունք, սակայն առայժմ չունի մշակված համակարգի վերանայման և բարելավման ընթացակարգեր, ինչպես նաև մեխանիզմներ և անհրաժեշտ գործիքներ: Կենտրոնի ՈԱ բաժինը ընդունում է այդ փաստը: Բացի այդ, թերի է իրականացված որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգը. ՈԱ բաժինը սահմանափակվել է

Պրահայի Կարլովի համալսարանի (Չեխիա) փորձով, որի հետ Կենտրոնն ունի համագործակցության պայմանագիր:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԳԿՄԿ որակի ապահովման 9 սկզբունքներից մեկը («ՈԱ ներքին և արտաքին գործընթացների փոխկապվածության») նախատեսում է. «Որակի ներքին ապահովումը արտաքին գնահատման հիմքն է և կառուցվում է վերջինիս չափանիշների և ընթացակարգերի հաշվառմամբ»: Այդ սկզբունքի համաձայն պարբերաբար պետք է կազմակերպի ԳԿՄԿ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթաց:

Արտաքին գնահատման նպատակով տեղեկատվության հավաքագրման առաջին փորձը կատարվել է ԳԿՄԿ ինքնավերլուծության ժամանակ, որն իրականացվել է 2013թ. «Որակի ներքին ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Այն ժամանակ Կենտրոնը առաջնորդվել է Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ՈԱԱԿ-ի ձևաչափով պահանջվող տեղեկատվությամբ:

Այժմ էլ որակի արտաքին ապահովման պահանջները, որոնք ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները և չափորոշիչներն են, արտացոլված են Կենտրոնի զարգացման ռազմավարական ուղղություններում, նպատակներում և խնդիրներում: Սակայն Կենտրոնը դեռևս չունի ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման գնահատման ցուցիչներ, չի մշակել ներքին տեղեկատվության այն ամբողջական լրակազմը, որը բավարար է ներքին և արտաքին գնահատումներ իրականացնելու համար: 2015թ. ինքնավերլուծության մեջ դեռևս կան տեղեկավության պակասի հետ կապված խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս հաստատությանը, ինչպես նաև փորձագիտական խմբին իրականացնել մի շարք գործընթացների վերլուծություն և գնահատում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Կենտրոնը, որպես ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվություն ապահովման մեխանիզմներ մատնանշում է տնօրենի տարեկան հաշվետվությունը, որում տեղ են գտնում ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները, ինչպես նաև Կենտրոնի ամբիոնների և այլ կառույցների հաշվետվությունները: Հաշվետվությունը հրապարակվում է որպես ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետվության մաս: Ուսուցման որակի վերաբերյալ ուսանողության և շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների ամենամյա վերլությունները ԳԽ-ում ներկայացվելուց հետո տրամադրվում են ամբիոններին ի գիտություն:

Կենտրոնում գործող Էլեկտրոնային դեկանատի համակարգը տեղեկատվություն է պարունակում ուսանողների առաջադիմության և շարժի վերաբերյալ: Ներքին ու արտաքին շահակիցները Կենտրոնի կողմից իրականացվող կրթական ծրագրերին կարող են մանրամասն ծանոթանալ 2014թ. վերամշակված Կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսումնառության կազմակերպման ուղեցույցների և դասընթացների տեղեկագրքերի միջոցով, որոնք հասանելի են առցանց տարբերակով:

Կենտրոնի ներքին գործընթացները և դրանք կանոնակարգող փաստաթղթերը մասամբ տեղադրված են կայքէջում (http://www.isec.am), որը դիտարկվում է Կենտրոնի գործունեության թափանցիկության ապահովման հիմնական մեխանիզմը և նոր նախաձեռնությունների քննարկումների կազմակերպման հարթակ: Կայքի որակի բաժնի էջում ներկայացված են միայն բաժնի խնդիրներն ու գործառույթները, իսկ կանոնակարգող

փաստաթղթերը, իրականացվող գործընթացների արդյունքները կամ դրանց վերլուծությունները բացակայում են:

Որպես տեղեկատվական համակարգի ապագա զարգացում Կենտրոնը, «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և զարգացում» դրամաշնորհի շրջանակներում, պլանավորում է համակարգը համալրել նոր մոդուլներով՝ ընդլայնելու իր շահակիցներին տեղեկատվության ապահովման մատչելիությունը: Մինչդեռ շահակիցների տեղեկացվածության աստիճանի վերլուծություններ չեն իրականացվում, ինչպես նաև չի գնահատվում գործունեության թափանցիկության Կենտրոնի կողմից կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը:

Դատողություններ: ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի ձևավորման, փաստաթղթերի մշակման, գործընթացների իրականացման համար արտաքին խթան է հանդիսացել ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրով 2014թ. ԿԳ նախարարության տրամադրած դրամաշնորհը: Կենտրոնի ԳԽ-ի կողմից հաստատված ՈԱ հայեցակարգը ու քաղաքականությունը, ինչպես նաև մշակված գործընթացները համահունչ են հաստատության առաքելությանը և ռազմավարական նպատակներին և ձևավորել են անհրաժեշտ հենք որակի ապահովման համակարգի ձևավորման համար: Հարկ է նշել, որ Կենտրոնում կարևորում են ուսուցման որակի շարունակական բարելավման ռազմավարությունը, որն արտացոլված է վերանայված ռազմավարական ծրագրի նպատակներում ու խնդիրներում:

ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքը և Կենտրոնի որակի ապահովման հիմնական բնագավառները ներկայացված են Որակի ապահովման ձեռնարկում, որը նույնպես մշակվել է դրամաշնորհի շրջանակներում: Ճիշտ է, ձեռնարկում նկարագրված են պատասխանատվությունների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների ու ստորաբաժանումների միջև, սակայն դերակատարները ամբողջապես տեղեկացված չեն իրենց պարտականությունների մասին: Պատճառներից մեկն այն է, որ ՈԱ համակարգին առնչվող փաստաթղթերի հասանելիությունը շահակիցներին սահմանափակ է, այդ թվում ձեռնարկի տեսքով: Մյուս կողմից, ձեռնարկի «ԳԿՄԿ Որակի ապահովման գործընթացները և ընթացակարգերը» բաժնում, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգից բացի, այլ ընթացակարգերի նկարագրություն չկա: Ընթացակարգերի բացակայության պայմաններում անհասկանալի է դառնում, թե ովքեր, ում պատասխանատվությամբ, ինչ ժամկետներում, ինչ հերթականությամբ և ինչպիսի որակի ապահովման գործողություններ պետք է իրականացնեն:

ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժինը ստեղծվել է ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Նույն ծրագրով Կենտրոնը ապահովվել է անհրաժեշտ գրասենյակային տեխնիկայով, կահույքով և նյութական ռեսուրսներով: ՈԱ բաժնի գործունեությունը ներկայումս ֆինանսավորվում է Կենտրոնի միջոցների և մասամբ միջազգային դրամաշնորհների հաշվին: Ճիշտ է, Կենտրոնը լրացուցիչ ֆինանսական և մարդկային ռեուրսներ է հատկացնում բուն ՈԱ գործընթացների իրականացման համար, սակայն, հարկ է նշել, որ բաժնի ոչ բոլոր հաստիքներն են լրացված, իսկ ՈԱ գործընթացների համար առանձին հատկացումներ բյուջեով չեն նախատեսվում: Իրավիճակը կհստակեցվի ՈԱ գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական և նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերի մշակումից հետո: Դրանց բացակայությունը թույլ չի տալիս Կենտրոնին իրականացնել ոլորտի միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում:

Որակի ապահովման ձեռնարկում ներկայացված Կենտրոնի Որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը չի համապատասխանում գործող համակարգին: Սխեմայում ԳԿՄԿ որակի ապահովման մշտական հանձնաժողովը բացակայում է, ինչպես նաև մի շարք այլ դերակատարներ (Ամբիոնների որակի կառավարման պատասխանատուներ և Ամբիոնային որակի ապահովման

ներկայացուցիչներ), որոնց գործառույթները սահմանված են, սակայն գործունեության մասին ամբիոններում էլ տեղեկացված չեն:

Կարևորելով որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների դերը՝ Կենտրոնը Որակի ապահովման ձեռնարկում կանոնակարգել է նրանց մասնակցությունը տարբեր գործընթացներին: Դրանց մի մասը ներկայումս իրականացվում է (մասնակցությունը տարբեր հարցումների, ներկայացուցիչների առկայությունը խորհուրդների կազմերում, ծրագրերի փորձաքննության իրականացում), սակայն հիմնական գործընթացներին շահակիցների մասնակցության մեխանիզմները մշակված չեն: Միայն հարցման անցկացումը արդեն ՊԻԳԲ շրջափուլի փոքր մասն է կազմում, և, գործընթացին մասնակցությունը որպես հարցվող, պասսիվ դեր է նախատեսում ուսանողների և շրջանավարտների համար: Նույն հարցումների պլանավորման, արդյունքների մշակման, դրանց հիման վրա կրթական ծրագրերի բարելավմանը ուսանողների մասնակցության մեխանիզմները մշակված չեն: Նույնը վերաբերում է նաև արտաքին շահակիցների մասնակցությանը կրթական ծրագրերի որակի ապահովման մոնիթորինգի և վերանայման գործընթացներին: Անհրաժեշտ է, որպեսզի Որակի բաժինը գնահատի ներքին և արտաքին շահակիցների մասնակցության աստիճանը և նրանց ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը:

Ներկայումս Կենտրոնի ՈԱ համակարգը ձևավորման փուլում է և ոչ լիարժեք է իրականացնում իր գործունեությունը: Դեռևս չի իրականացվել որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն, չի գնահատվել դրանց ազդեցությունը Կենտրոնի գործունեության վրա: Մշակված չեն նաև ՈԱ համակարգի բարելավման մեխանիզմները և գործիքները: Կենտրոնը կարևորում է որակի շարունակական բարելավումը որպես իր քաղաքականության կարևորագույն սկզբունք և ընդունում է նշված գործիքամիջոցների մշակման անհրաժեշտությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ արտաքին գնահատման նպատակով տեղեկատվության հավաքագրման ժամանակ Կենտրոնը առաջնորդվում է Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ՈԱԱԿ-ի ձևաչափով պահանջվող տեղեկատվությամբ, որն արտացոլված է նաև Կենտրոնի զարգացման ռազմավարական ուղղություններում, նպատակներում և խնդիրներում: Սակայն ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման գնահատման ցուցիչների, ներքին տեղեկատվության ամբողջական լրակազմի բացակայությունը թույլ չի տալիս իրականացնել անաչառ գնահատումներ: Հիմնավոր և վստահելի տեղեկատվության պակասն է պատճառը, որ 2015թ. ինքնավերլուծության մեջ հաստատությունը, հետագայում նաև փորձագիտական խումբը, հնարավորություն չեն ունեցել իրականացնել մի շարք գործընթացների վերլուծություն և գնահատում: Ներկայումս որակի ապահովման համակարգը պատրաստ չէ բավարար տեղեկատվություն տրամադրել Կենտրոնի կառավարման մարմիններին մատուցվող ծառայությունների և կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ:

Տնօրենի տարեկան հաշվետվությունը, որում տեղ են գտնում Կենտրոնի ստորաբաժանումների գործունեության արդյունքները ընդունված մեխանիզմ է ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվություն տրամադրելու համար: Գերադասելի կլիներ այդ հաշվետվության քննարկումը Կենտրոնի աշխատակազմի կողմից և առանձին հրապարակումը: Այդ հաշվետվության, ինչպես նաև ուսուցման որակի վերաբերյալ ուսանողության և շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների վերլուծությունների հրապարակման դեպքում ավելի մեծ թվով շահակիցներ կարող են տեղեկացված լինել իրավիճակին և իրենց *առաջարկներով նկատելի ներդրում ունենալ բարելավման գործընթացներում:

Կենտրոնը բավական ակտիվ օգտագործում է իր կայքէջը ներքին գործընթացները և դրանք կանոնակարգող փաստաթղթերը շահակիցներին ներկայացնելու, ինչպես նաև

իրականացվող կրթական ծրագրերի մասին դասընթացների տեղեկագրքերի միջոցով տեղեկացնելու և հասանելի դարձնելու համար: Կայքը Կենտրոնի գործունեության թափանցիկության ապահովման հիմնական մեխանիզմն է, հետևաբար այդ մեխանիզմի արդյունավետության գնահատման և շահակիցների տեղեկացվածության աստիճանի **ուսումնասիրության անհրաժեշտություն կա: Այդ դեպքում հիմնավորված կլինի Կենտրոնի տեղեկատվական համակարգի համալրումը անհրաժեշտ տեղեկատվությամբ և մոդուլներով: Իսկ ներկա իրավիճակում որակի ապահովման համակարգի կողմից իրականացված գնահատումների և վերլուծությունների տվյալների բացակայության պայմաններում կայքը շահակիցներին բավարար տեղեկատվություն չի տրամադրում կրթական և այլ գործընթացների որակի մասին:**

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնի ՈԱ համակարգը ձևավորման փուլում է և լիարժեք չի իրականացնում իր գործառույթները, մշակված չեն որակի ապահովման ընթացակարգերը, դերակատարները ամբողջապես տեղեկացված չեն իրենց պարտականությունների մասին, հիմնական գործընթացներին շահակիցների մասնակցության մեխանիզմները մշակված չեն, համակարգը չի ապահովում անհրաժեշտ մեխանիզմներ և բավարար տվյալներ ծրագրերի և այլ մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման և դրանց որակի մասին հաշվետվողականության տրամադրման համար, մշակված չեն ՈԱ համակարգի բարելավման մեխանիզմները և գործիքները, փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնը չի բավարարում չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին **անբավարար է**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելությունը և նպատակները	**Բավարար է**
2. Կառավարումն ու վարչարարությունը	**Բավարար է**
3.Մասնագիտության կրթական ծրագրերը	**Բավարար է**
4. Ուսանողները	**Բավարար է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	**Բավարար է**
6. Հետազոտությունը և զարգացումը	**Բավարար է**
7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները	**Բավարար է**
8.Հասարակական պատասխանատվությունը	**Բավարար է**
9. Արտաքին կապերը և միջազգայնացումը	**Անբավարար է**
10. Որակի ներքին ապահովման համակարգը	**Անբավարար է**

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրությունը

14. 11. 2016թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Էդուարդ Հակոբյան – 1982թ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական Ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը, 1986-1989թ՝ սովորել է Մոսկվայի ավտոճանապարհային ինստիտուտի ասպիրանտուրայում, միևնույն ժամանակ դասավանդելով «Արդյունաբերական էլեկտրոնիկա և ավտոմատիկա» ամբիոնում, տեխնիկական գիտությունների թեկնածու է, դոցենտ: Ներկայումս Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ), "Էլեկտրատեխնիկա և էլեկտրաբանեցում" ամբիոնի վարիչն է, ավելի քան 40 գիտական հոդվածների, ուսումնական ձեռնարկների և մեթոդական աշխատանքների հեղինակ:

Անցել է բազմաթիվ վերապատրաստումներ ՀՀ-ում և արտասահմանում՝ նվիրված Որակի ներքին ապահովման համակարգերի ներդրմանը և զարգացմանը (Թուրին, Իտալիա), Բարձրագույն կրթական համակարգում որակի կառավարմանը (Կոբլենց, Գերմանիա), Բոլոնիայի գործընթացը բարձրագույն կրթական համակարգում (Ջենովա, Իտալիա) և այլն: Որպես համակարգող կամ փորձագետ-խորհրդատու մասնակցել է մեկ տասնյակից ավել TEMPUS-ի և Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրերի:

2011 թ. եղել է Երևանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանի (ԵՊՃՇՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի ղեկավար:

Ազիր Ալուա - ծնված 15.04.1976թ., փիլ. դոկտոր (PhD) Համկարգչային գիտությունների որլորտում: 2007-2009թթ. ղեկավարել է Հարավ-արևելյան եվրոպական համալսարանի հետազոտական կենտրոնը: 2011-2013թթ. պաշտոնավարել է նույն համալսարանում որպես գիտության գծով պրոռեկտոր, 2012թ.-ից մինչ օրս դասախոսում է տվյալ համալսարանում: 2011թ.-ին ստացել է տեխնիկական գիտությունների դոկտորի կոչում: 2013թ.-ից մինչ օրս հանդիսանում է նախկին Հարավսլավիայի մաս կազմող Մակեդոնիայի կառավարության՝ Բարձրագույն կրթության, գիտության, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գծով վարչապետի խորհրդական: 2007թ.-ից մինչ օրս ղեկավարել է բազմաթիվ գիտական և կրթական նախագծեր, համակարգում և մասնակցում է TEMPUS և Համաշխարհային բանկի ծրագրերին: Անդամակցում է մի շարք միջազգային գիտական կազմակերպությունների և մասնագիտական կառույցների: Բազմաթիվ գիտական հոդվածների և մենագրությունների հեղինակ է:

Նորա Գևորգյան – 2014-ին ավարտել է Լայդենի համալսարանի (Լայդեն, Հոլանդիա) մագիստրատուրան Միջազգային հարաբերություններ և Եվրոպագիտություն մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածու է «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ, քաղաքագիտության դոցենտ: Աշխատում է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնում որպես դոցենտ: Դասավանդում է նաև Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական և հասարակագիտական համալսարանի UNESCO-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնում: Աշխատել է որպես գիտայցելու և դասավանդել է մի շարք եվրոպական և ամերիկյան բուհերում (Ֆլորիդայի պետական համալսարան, Լայդենի համալսարան, Տարտուի համալսարան և այլն):

Մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների և մասնագիտական կրթության զարգացման ծրագրերի (U.S. State Department Bureau of Educational and Cultural Affairs' Junior Faculty Development Program-ի մրցանակակիր, Public Service Fellowship Program (PSFP) of the U.S. Department of State's Public Affairs Section-ի մրցանակակիր, Netherlands Organization for

International Cooperation in Higher Education (NUFFIC)-ի մրցանակակիր, Warsaw Euro-Atlantic Summer Academy (WEASA) և այլն):

Մերի Ղազարյան –2003թ-ին ավարտել է ՀՊՃՀ մագիստրատուրան Շրջակա միջավայրի ճարտարագիտական պաշտպանություն (էներգետիկայի ճյուղում) մասնագիտությամբ: 2003-2006թթ եղել է ՀՊՃՀ Ջերմաէներգետիկայի ամբիոնի ասպիրանտ: 2007թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը. տեխնիկական գիտությունների թեկնածու է, դոցենտ: Ունի տպագրված 15 գիտական աշխատություն, 3 մեթոդական ցուցումներ, 1 ուսումնական ձեռնարկ:

2003թ.-ից առ այսօր աշխատում է ՀԱՊՀ-ում: Եղել է Էներգետիկայի դեպարտամենտի վարիչի տեղակալ գիտության գծով, Մագիստրոսական ուսուցման բաժանմունքի վարիչի պաշտոնակատար, ՀԱՊՀ Միջուկային անվտանգության տարածաշրջանային ուսումնական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար: Ներկայումս Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Ջերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պաշտպանություն» ամբիոնի վարիչն է: Նա միաժամանակ ՀՀ Բնապահպանության նախարարին կից գիտատեխնիկական խորհրդի անդամ է:

2007թ. սկսած մասնակցել է տասնյակ տեղական և միջազգային ծրագրերի ու վերապատրաստումների ինչպես մասնագիտական զարգացման, այնպես էլ կրթության կառավարման, բոլոնիայի գործընթացի ներքո եռաստիճան կրթական համակարգի ներդրման, E-learning գործիքամիջոցների կիրառման և այլ թեմաներով:

Թագուհի Աբրահամյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի է, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի (ՀՈՒԱԱ) Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության հանձնաժողովի նախագահը: Եղել է ֆակուլտետի ՈՒԳԸ անդամ, ուսանողական խորհրդի նախագահ, Համալսարանի կառավարման խորհրդի անդամ:

Մասնակացել է վերապատրաստումների Բուլղարայի միջազգային համալսարանական քոլեջում («Երիտասարդ առաջնորդների ակադեմիա» հնգօրյա դասընթաց) և Գերմանիայի Կոբլենց-Լանդաու համալսարանում («Բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդման խնդիրները» թեմայով):

ՈԱԱԿ-ի կողմից իրականացված ուսանող-փորձագետների վերապատրաստման դասընթացների մասնակից է:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

10.05.2016 թ.–13.05.2016 թ.
10.05.2017

	10.05.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում կենտրոնի տնօրենի հետ	9:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում փոխտնօրենի, ուսումնական մասի պետի և դեկանի հետ	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:45	45 րոպե
5	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում /ուս.մաս, դեկանատ/	14:00	15:00	60 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ	15:15	16:15	60 րոպե
7	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ	16:30	17:30	60 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

	11.05.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	9:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	11:00	12:00	60 րոպե
3	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ	12:30	13:30	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:45	14:30	45 րոպե
5	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	14:45	15:45	60 րոպե
6	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ /տեղեկատվական տեխնոլոգիաներ, արտաքին կապեր, շրջանավարտների հետ կապ և զբաղվածություն, ասպիրանտուրա/	16:00	17:00	60 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:15	18:30	75 րոպե

	12.05.2016թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ՈՒԽ անդամների հետ	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ուսանողության ներկայացուցիչների հետ	10:45	12:00	75 րոպե
3	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	12:15	13:45	90 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:00	14:45	45 րոպե
5	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ /ֆինանսատնտեսական, անձնակազմի կառավարման, տնտեսական/	15:00	16:00	60 րոպե

6	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	16:15	16:45	30 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:30	90 րոպե

	13.05.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ	9:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	10:45	12:00	75 րոպե
3	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	12:15	12:45	30 րոպե
4	Հանդիպում ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների հետ	13:00	14:00	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:00	14:45	45 րոպե
6	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:00	15:45	45 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:45	16:15	30 րոպե
8	Հանդիպում կենտրոնի տնօրենի հետ	16:30	17:15	45 րոպե
9	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափանիշ
1	ԳԿՄԿ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն	1-10
2	ԳԿՄԿ կանոնադրություն	1, 2
3	Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման Ռազմավարական ծրագիրը	1-10
4	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան 2014-2018 թթ.	1-10
5	ՀՀ ԳԿՄԿ Որակի ապահովման ձեռնարկ	1-10
6	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի լրամշակման և համալրման ու 2014-2018 թթ. ժամանակային նեռառմամբ հաստատման հիմնավորում	1-10
7	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բյուջե 2014-2015-ի նախահաշիվ	1, 2, 7
8	ԳԱԱ տարեկան հաշվետվություն – 2014	2, 8, 10
9	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի կանոնադրություն	2, 9
10	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կանոնակարգ	4
11	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական նպաստների հատկացման մասին կանոնակարգ	4
12	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման (արտոնման) կարգ	3
13	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրոսական մասնագիտությունների ցուցակ	3, 4
14	ՀՀ ԳԱԱ նախագահության որոշման քաղվածք	3
15	Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգ	3, 10
16	Կանոնակարգ ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայի ընդունելության, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման	3, 4
17	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման կանոնակարգ	5
18	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Գիտական խորհրդի կանոնակարգ	2
19	ՄՈՒՀ-ի աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը	2, 5
20	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Որակի բաժնի վերլուծություններ	5, 10
21	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումների և մասնագիտական որակավորումների բարձրացման կանոնակարգ	5
22	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության կանոնակարգ	2, 5
23	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կանոնադրություն	2, 8
24	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Հանրային կապերի հայեցակարգ	2, 8
25	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի կանոնակարգ	2, 4
26	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կառուցվածքը	2
27	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում	5
28	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 3 ամբիոնների ուս. պլանները և նիստերի արձանագրությունները	5
29	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկանատի գործունեության կանոնակարգ	2

30	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կիրառական հոգեբանության կենտրոնի կանոնադրություն	5
31	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսումնամեթոդական մասի գործունեության կանոնակարգ	2
32	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական խորհրդի կանոնադրություն	4, 10
33	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հիմնական և համատեղությամբ աշխատողների ցանկեր	2, 5
34	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Արտաքին կապեր	9
35	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ	10
36	ՀՀ կառավարության որոշումների և ԿԳՆ հրամաններ	2
37	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԽ որոշումներ	1-10
38	ԳԿՄԿ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ /առկա, հեռակա, նոր խմբագրությամբ/	3, 4, 5
39	Մասնագիտության կրթական ծրագրեր – Դեղագործական քիմիա, Բնապահպանություն և բնօգտագործում, Միջազգային հարաբերություններ	3, 4, 5
40	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Որակի ապապիովման բաժնի գործունեության տարեկան հաշվետվություններ	10
41	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կողմից կատարված բենչմարքինգի վերլուծություններ	10
42	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների և այլ ստորաբաժանումների նիստերի արձանագրությունների, քննարկումների, տարեկան հաշվետվությունների օրինակներ	1-10
43	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ միջազգային գործունեության ոլորտում վերջին 3 տարվա առաջընթացի օրինակներ	9
44	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կողմից կազմակերպված լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների արդյունավետության և արդիականության վերլուծություններ	8
45	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հետազոտության ոլորտում հետաքրքրությունները և հավակնությունները արտահայտող միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի օրինակներ	6
46	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման ծրագիրը, ժամանակացույցը և թեմաները	5
47	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և որակի ապահովման հարցումների հաշվետվությունները	4
48	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Ուսանողական խորհրդի կանոնադրության 2.1.3 – 2.1.8 կետերի իրականացման օրինակներ	4
49	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմները	4
50	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումների և ուսումնասիրությունների պիլոտային ծրագրի արդյունքների հաշվետվությունը	4
51	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 3 ՄԿԾ-ի մասով լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվությունների տրամադրման օրինակներ	4
52	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 2015 և 2015-2016 թթ. 1-ին կիսամյակի կտրվածքով ուսանողների շարժունության տվյալները	4
53	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինքնավերլուծությունում ներգրավված երեք ՄԿԾ-ների մասով կատարված մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման հաշվետվությունները	3

54	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կողմից վարվող քաղաքականությունը ուղղված ուսանողների և պրոֆեսորադասախոսական շարժունության ցուցանիշները բարելավելու համար, օրինակներ	3
55	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինքնավերլուծությունում ներգրավված երեք ՄԿԾ-ի մասով կատարված բենչմարքինգի հաշվետվություններ	3
56	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գրագողության դեմ պայքարի վարած քաղաքակության և մեխանիզմների կիրառման օրինակներ	3
57	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների գնահատման թափանցիկությունը և օբյեկտիվությունը ապահովող մեխանիզմների կիրառման օրինակներ	3
58	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինքնավերլուծությունում ընդգրկված երեք մասնագիտական կրթական ծրագրերի առարկայական ծրագրերի օրինակներ	3
59	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վերանայվող և ներդրվող նոր մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում կատարված աշխատաշուկայի վերլուծությունների հաշվետվություններ	3
60	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինքնավերլուծությունում ներկայացված երեք կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և գնահատման հաշվետվություններ	2
61	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կողմից կատարված արտաքին և ներքին ազդող գործոնների ուսումնասիրման հաշվետվությունները	2
62	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ժամանակացույց-պլանի իրականացման գնահատման օրինակներ	2
63	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վարչական պաշտոնների նկարագրեր	2
64	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսումնական տարում նախատեսված գործողությունների, միջոցառումների մշտադիտարկման կատարողականները	1
65	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Ռազմավարական ծրագրի իրականացման կարճաժամկետ օպերատիվ պլաններ	1
66	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման տարեկան զեկույցներ	1
67	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ իրականացված հարցումների և դրանց արդյունքների վերլուծության օրինակներ	1
68	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ-ի պլան-ժամանակացույցի հաստատման որոշման փաստաթուղթը	1
69	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ-ի մշակման մեխանիզմներ և դրան առնչվող վերլուծական բնույթի նյութեր/փաստաթղթեր	1
70	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման և վերահսկման համակարգի գործածումը ապացուցող վերլուծական բնույթի նյութեր/փաստաթղթեր	1, 10
71	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 2014-2018 թթ. ՌԾ-ի վերահաստատման անհրաժեշտությունը հիմնավորող նյութեր/փաստաթղթեր	1

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԳԱԱ ԳԿՄԿ-ի կենտրոնական մասնաշենք

1. դեկանատ (նաև էլեկտրոնային)
2. լսարաններ
3. հեռահար ուսուցման լսարան
4. գրադարան (նաև էլեկտրոնային)
5. ընթերցասրահ
6. ճաշարան
7. շրջանավարտների հետ կապի և զբաղվածության և ուսանողական խորհրդի ընդհանուր սենյակ
8. տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
9. որակի ապահովման կենտրոն
10. բակային տարածք

ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն

11. ամբիոն
12. լսարան
13. աշխատասենյակներ
14. լաբորատորիաներ
15. գրադարան

ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

16. ամբիոն
17. կոնֆերանս սրահ
18. լսարան
19. համակարգչային լսարան
20. լաբորատորիաներ
21. բակ

ԳԱԱ Պատմության ինստիտուտ

22. միջազգային հարաբերությունների ամբիոն
23. լսարաններ
24. դահլիճ-կոնֆերանս սրահ
25. ամբիոնի առանձնացված գրադարան-ընթերցասրահ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ




Հոգեբանության ամբիոն
Մանկավարժության և սոցիոլոգիայի ամբիոն
Հոգեբանական դիտարան
Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն
Բնապահպանության և բնօգտագործման ամբիոն
Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ
Նեյրոֆիզիոլոգիայի և տոքսինոլոգիայի ամբիոն
«Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ
Կենսատեխնոլոգիայի ամբիոն
Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
Երկրաբանության ամբիոն
Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ
Սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության ամբիոն
Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ
Ռադիոտեխնիկայի և կապի ամբիոն
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Գրադարանային-տեղեկատվական աղբյուրների ամբիոն
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ
Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ
Դեղագործական քիմիայի ամբիոն
«Գիտության աշխարհում» հանդես

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՀ – Անկախ Պետությունների Համագործակցություն
ԱՄՆ – Ամերիկայի Միացնյալ Նահանգներ
ԲՈՒՀ -Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԲԿԵՏ – Բարձրագույն կրթության եվրոպական տարածք
ԳԱԱ – Գիտությունների ազգային ակադեմիա
ԳԽ – Գիտական խորհուրդ
ԳԿՄԿ - Գիտակրթական միջազգային կենտրոնը
ԵՄ - Եվրոպական միություն
ԿԳՆ - Կրթության և գիտության նախարարություն
ՀԱՊՀ - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
ՀՊՃՀ - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - Որակի ապահովում
ՈԱԱԿ - Որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
ՊԴԿ – Պրոֆեսորադասախոսական կազմ
ՊԴ – Պրոֆեսորադասախոսական
ՊԻԳԲ – Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
ՌԾ - Ռազմավարական ծրագիր
SS – Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՈԻԳԸ - Ուսանողական գիտական ընկերություն
ՈԻԽ – Ուսանողական խորհուրդ